ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 1018 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի նոյեմբերի 16-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 28,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Շիրակի մարզի անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (SOAR) հիմնադրամի կողմից ձեռք բերված «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 2016 թվականի արտադրության «Toyota Hiace» մակնիշի միկրոավտոբուսը (նույնականացման համարը՝ JTGSS23P8G0160597, 27,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,800 ԱՄՆ-ի դոլար, «Հյուսիսային» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն»
Բարեգործական հասարակական
կազմակերպության գործադիր տնօրեն
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ կողմից
14 Նոյեմբերի 2017

«Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» Բարեգործական հասարակական կազմակերպություն
05531026
Общественная Организация
Non-Governmental Organization

# ԾՐԱԳԻՐ

**Աջակցություն Շիրակի մարզի անապահով ընտանիքներին**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում հաշմանդամություն և հատուկ կարիքներ ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին ուղղված առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային և այլ ծրագրերի իրականացմանը, մասնավորապես, ծրագրում ընդգրկված՝ նշված շահառուներին համապատասխան հաստատություններ (բժշկական հաստատություններ, սպորտային համալիրներ և մշակութային օջախներ) տրասպորտային տեղափոխումներն անվճար հիմունքներով իրականացնելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (SOAR) հիմնադրամ՝ 150N Ռեդնոր Չեստեր, Ռեդնոր, Փեննսիլվանիա, 19087, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» ԲՀԿ (ք. Գյումրի, Ե. Չարենց 11, բն17, հեռ՝ 055111121) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 28800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի անապահով ընտանիքներ |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը (շարունակելի) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շիրակի մարզի անապահով ընտանիքների համար անվճար տրանսպորտային տեղափոխումների կազմակերպում դեպի բժշկական, կրթական հաստատություններ, սպորտային և մշակութային վայրեր՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը: Նախատեսվում է միկրոավտոբուսի ներմուծում 28800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և գինը | Միկրոավտոբուսի ներմուծում՝ TOYOTA HIACE սպիտակ գույնի, մոդելը 2016, Chassis No:JTGSS23P8G0160597, միկրոավտոբուսի արժեքն է 27000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br>Փոխադրման ծախսեր՝ 1800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Շիրակի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, Գերմանական կարմիր խաչի ընկերության, ՍՕՍ մանկական գյուղերի, մշակութային,առողջապահական, կրթական, կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է հաշվետվությունների միջոցով՝ Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR) բարեգործական հիմնադրամի կողմից, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

«Համայնքային Զարգացման և Սոցիալական Աջակցության Կենտրոն» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն
Centre of Community Development and Social Support Charitable Non-Governmental Organization
05531026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 նոյեմբերի 2017 թվականի N Մ-1019-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԹՈՒՄՈ ՍՏՈՒԴԻԱՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է***.

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 1,920,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Թումո ստուդիաներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Platform. կազմակերպության հետ (Rached Center, 2nd floor, Jounieh Highway, Lebanon) 2017 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճարտարապետական, ինժեներական, կոնստրուկտորական և դիզայներական խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 187,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) APAVE Liban s.a.r.l. կազմակերպության հետ (Nohra Building, Tahwita Highway, Beirut, Lebanon) 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ N PB171517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային համակարգերի տեխնիկական խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 1,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սիմոնյան կրթական հիմնադրամի

տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից

«21» Նոյեմբերի 2017թ.

# “Թ Ո Ւ Մ Ո   Ս Տ Ո Ւ Դ Ի Ա Ն Ե Ր”
## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | “Թումո Ստուդիաներ” ծրագիրը անվճար կրթական նախաձեռնություն է, որի նպատակն է մի կողմից հրավիրելով աշխարհի տարբեր ծայրերում գտնվող դիզայներական մտքի և խոհարարական արվեստի առաջատար մասնագետներին, իսկ մյուս կողմից ծրագրին մասնակից դարձնելով ուսանողներին, պրակտիկանտներին և արհեստավորներին, ստեղծել մեկ ընդհանուր հարթակ, որտեղ նրանց համագործակցության արդյունքում ստեղծվում են արվեստի բարձրորակ արժեքներ, խոհարարական նրբահամ ճաշատեսակներ, և որտեղ ձևավորվում և կրթվում են Հայաստանի ապագա արհեստավարժները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյանների հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Ջի Էյչ Էմ բարեգործական հիմնադրամի, ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» Կրթական Հիմնադրամ (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, գրանցման թիվ 222.160.01143, վկայական 03Ա086142) |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ք.Երևան, Հալաբյան 2/1 և ք.Երևան, Պուշկինի 38 հասցեներում՝ կրթության և մշակույթի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 1,920,000,000 (մեկ միլիարդ ինը հարյուր քսան միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• 18-28 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ անկախ նրանց սեռից, կրոնական, ռասայական, էթնիկ պատկանելիությունից: Ծրագրին մասնակցելու շնորհը տրամադրվելու է մրցույթային եղանակով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «Թումո Ստուդիաներ» ծրագրի իրականացման ժամկետներն են՝ 2017թ-ի սեպտեմբերի 29-ից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն իրականացվելու է 2 փուլով՝ 1-ին փուլը, որը սկսվելու է 2017թ-ի նոյեմբերի 1-ից և ավարտվելու է 2021թ-ի դեկտեմբերի 31-ին նախատեսվում է իրականացնել բուն կրթական մասը, իսկ երկրորդ փուլը, որը սկսվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ին և ավարտվելու է 2019թ-ի դեկտեմբերի 31-ին՝ շինարարության փուլն է, որի ընթացքում նախատեսվում է կառուցել “Թումո Ստուդիաների” շենքային պայմանները: Մինչև շենքային պայմանների ստեղծումը Ծրագրի բուն կրթական մասը իրականացվելու է վարձակալված տարածքում:<br>1 փուլը բաղկացած է լինելու հետևյալ միջոցառումներից (01.11.2017-ից մինչև 31.12.2021),<br>• կրթական պայմանների ապահովման նպատակով գույքի, սարքավորումների, նյութերի, գործիքների ձեռք բերում – 337 070 000 (երեք հարյուր երեսունյոթ միլիոն յոթանասուն հազար) դրամ,<br>• նպատակաուղղված դասընթացների վարում – 109 034 658 (մեկ հարյուր ինը միլիոն երեսունչորս հազար վեց հարյուր հիսունութ) դրամ,<br>• Կրթաթոշակների տրամադրում – 39 532 800 (երեսունինը միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր) դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | • Տարածքի վարձակալության, վերանորոգման, կոմունալ վճարների, անվտանգության համակարգի ներդրման և սպասարկամ գծով կատարվելիք ծախսեր – 75 785 250 (յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր հիսուն) դրամ<br>• Կրթական մասում ներառված աշխատողների աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ – 77 872 400 (յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր) դրամ<br>• Վարչական մասի աշխատողների աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ – 200 954 267 (երկու հարյուր միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր վաթսունյոթ) դրամ,<br>2-րդ փուլը բաղկացած է լինելու հետևյալ միջոցառումներից(29.09.2017-ից մինչև 31.12.2021),<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում – 122 750 625 (մեկ հարյուր քսաներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր քսանհինգ) դրամ<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և գրանցման աշխատանքների իրականացում – 168 000 000 (մեկ հարյուր վաթսունութ միլիոն) դրամ,<br>• Շինարարական ապրանքների և աշխատանքների ձեռք բերում – 789 000 000 (յոթ հարյուր ութսունինը միլիոն) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • կրթական պայմանների ապահովման նպատակով գույքի, սարքավորումների, նյութերի, գործիքների ձեռք բերում արտերկրից – 235 949 000 (երկու հարյուր երեսունհինգ միլիոն |



| | | |
|---|---|---|
| | | ինը հարյուր քառասունինը հազար) դրամ՝ 2017-2021թթ.,<br>• կրթական պայմանների ապահովման նպատակով գույքի, սարքավորումների, նյութերի, գործիքների ձեռք բերում ՀՀ-ից – 101 121 000 (մեկ հարյուր մեկ միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար) դրամ՝ 2017-2021թթ.,<br>• նպատակաուղղված դասընթացների վարման ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 98 131 192 (իննսունութ հազար մեկ հարյուր երեսունմեկ հազար մեկ հարյուր իննսուներկու) դրամ՝ 2017-2021թթ.,<br>• նպատակաուղղված դասընթացների վարման ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 10 902 466 (տասը միլիոն ինը հարյուր երկու հազար չորս հարյուր վաթսունվեց) դրամ՝ 2017-2021թթ.,<br>• Տարածքի վարձակալության, վերանորոգման, կոմունալ վճարների, անվտանգության համակարգի ներդրման և սպասարկամ գծով կատարվելիք ձեռք բերումներ ՀՀ-ից – 75 785 250 (յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր հիսուն) դրամ՝ 2017-2021թթ.,<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 112 750 625 (մեկ հարյուր տասներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր քսանհինգ) դրամ՝ 2017-2019թթ.,<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 10 000 000 (տասը միլիոն) դրամ՝ 2017-2019թթ.,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողության, խորհրդատվական, փաստագրման աշխատանքների և ծառայությունների ձեռք |

| | | |
|---|---|---|
| | | բերում ՀՀ-ից – 151 200 000 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ՝ 2017-2019թթ.,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողության, խորհրդատվական, փաստագրման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 16 800 000 (տասնվեց միլիոն ութ հարյուր հազար) դրամ՝ 2017-2019թթ.,<br>• Շինարարական ապրանքների և աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 631 200 000 (վեց հարյուր երեսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ՝ 2017-2019թթ.,<br>• Շինարարական ապրանքների և աշխատանքների ձեռք բերում արտերկրից – 157 800 000 (մեկ հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) դրամ՝ 2017-2019թթ.: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի ամբողջ ընթացքում կազմակերպչական ծախսերը կազմելու են 200 954 267 (երկու հարյուր միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր վաթսունյոթ) դրամ, որը ամբողջությամբ ուղղվելու է Վարչական մասի աշխատողների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարումներին: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Մարալ Մկրտիչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1020 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐԱՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 01.1/141-2/21392-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 02/14/20810-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48114-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 01/10.01/4903-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 102,852,030 դրամ ընդհանուր արժեքությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի կենտրոն տանող ճանապարհահատվածի հիմնանորգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ճամբարակ ՃՇՇԳ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08100179) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N ՀՀ/Ճ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորգման աշխատանքների իրականացում՝ 102,252,030 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417251) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 07/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«13» նոյեմբերի 2017թ.

# «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի կենտրոն տանող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքներ»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի կենտրոնի բարեկարգմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Խաչարձան գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 102.852.030,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ. նոյեմբերի 01-ից մինչեւ 2018թ. օգոստոսի 01-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ. նոյեմբերի 01 -ից մինչեւ 2018թ. օգոստոսի 01-ը Խաչարձան համայնքի կենտրոն (համայնքապետարան) տանող ճանապարհահատվածի հիմնանորոգում՝ 102.252.030,00 դրամ արժողությամբ<br><br>շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 600.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից համայնքապետարան տանող ճանապարհահատվածի հիմնանորոգում՝ 102.252.030,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«ՅԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |



Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 նոյեմբերի 2017 թվականի N Մ - 1021 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/21078-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 02/14/20984-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/12163-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 03/07-1/16064-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N ՆՁ/22.2/14402-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48118-17 և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01/14.2/5213 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 47,046,079 դրամ ընդհանուր արժողությամբ «Կոտայքի մարզում ընտանիքների ամրապնդում» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

«01» նոյեմբերի 2017թ.

«Կոտայքի մարզում ընտանիքների ամրապնդում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ինչպես «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության, այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական առաջնահերթություն է մանկալքության կանխարգելմանն ուղղված գործունեությունը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագիր է իրականացնում Կոտայք գյուղում: Այս ծրագիրն ուղղված է ընտանիքների ամրապնդմանը և երեխաներին լքելու դեպքերի ռիսկայնության նվազեցմանը: Ընտանիքներին կազմակերպությունը ցուցաբերում է ամենայն աջակցություն, նրանց սոցիալ-իրավական խնդիրների, ներընտանեկան բարոյա-հոգեբանական մթնոլորտի բարելավման, ինչպես նաև զբաղվածության և առողջապահական հարցերում.<br>1. Կոտայք գյուղում մանկալքության դեպքերի քանակի նվազեցում ;<br>2. ծրագրի շահառու ծնողների մոտ ծնողավարության գիտելիքների և հմտությունների ավելացում;<br>3. ծրագրի շահառու երեխաների հոգեբանական վերականգնում;<br>4. ծրագրի շահառու ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում;<br>5. ներընտանեկան միջանձնային հարաբերությունների բարելավում:<br>Այս ծրագիրն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ, մասնավորապես՝ նրանց կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Կոտայք գյուղում ծրագիրն իրականացվում է կազմակերպությանը պատկանող շինությունում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Կոտայք գյուղում: Այն առնչվում է սոցիալական, իրավական և կրթական բնագավառներին: |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 01.01.2018 - 31.12.2018 թվականի ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 47 046 079 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա 200 երեխաներ, 140 մեծահասակներ և 95 ընտանիքներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 01.01.2018 - 31.12.2018 թվականի ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ կազմում է մոտ 2 200 000 ՀՀ դրամ<br>1.1 Դպրոցական պարագաների տրամադրում՝ 1 200 000 ՀՀ դրամ;<br>1.2 Ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և նախասիրությունների խմբակների կազմակերպում՝ 600 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>1.3 Նյութեր խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփածո, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ 400 000 ՀՀ դրամ;<br>2. Առաջնային առողջության պահպանում,բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկատվածության բարձրացում)՝ կազմում է մոտ 6 708 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2.1.առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում՝ 1 800 000 ՀՀ դրամ<br>2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ցերեկային խնամք և խմբակներ (նկարչություն, պար և այլն) ծրագրի շահառու երեխաների համար, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում ՝ 4 408 000 ՀՀ դրամ<br>2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ 500 000 ՀՀ դրամ<br>3. Ծրագրի շահառուներին՝ նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում (սննդի և հագուստի տրամադրում) և տնտեսական կայունացման աջակցություն (աշխատանքային գործիքներ, սարքեր և սարքավորումներ աշխատանքային գործունեություն ծավալելու համար) 4 600 000 ՀՀ դրամ:<br>4. Սարքավորումների, գույքի վերանորոգում, կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ կազմում է մոտ 4 223 000 ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 5. Շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ կլոր սեղան և շահառուների խնդիրների քննարկումներ՝ կազմում է մոտ 500 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ կազմում է մոտ 19 965 079 ՀՀ դրամ (1 հոգեբան և 6 սոց. աշխատող), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>6.1 սոցիալական աշխատողներ՝ 17 338 095 ՀՀ դրամ, թվով 6 աշխատակից<br>6.2 հոգեբան՝ 2 626 984 ՀՀ դրամ, թվով 1 աշխատակից<br>7. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 8 850 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ կազմում է մոտ 1 600 000 ՀՀ դրամ:<br>1.1 Դպրոցական պարագաների ձեռքբերում՝ 1 200 000 ՀՀ դրամ;<br>1.2 Նյութերի ձեռքբերում՝ խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփոն, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ 400 000 ՀՀ դրամ;<br>2. Ծրագրի շահառուներին՝ նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում (սննդի և հագուստի ձեռքբերում) և տնտեսական կայունացման աջակցություն (աշխատանքային գործիքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերում՝ աշխատանքային գործունեություն ծավալելու համար) 4 600 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>2.1 սննդի և հագուստի ձեռքբերում՝ 3 400 000 ՀՀ դրամ<br>2.2 աշխատանքային գործիքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերում՝ 1 200 000 ՀՀ դրամ<br>3 Սարքավորումների, գույքի վերանորոգում, կոմունալ ծառայություններ կազմում է մոտ 4 223 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1 գույքի, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում 1 460 000 ՀՀ դրամ;<br>3.2 կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ 2 763 000 ՀՀ դրամ; այդ թվում՝<br>3.2.1 ջրամատակարարման վարձավճար՝ 40 000 ՀՀ դրամ;<br>3.2.2 էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 1 060 000 ՀՀ դրամ;<br>3.2.3 գազամատակարարման վարձավճար՝ 1 663 000 ՀՀ դրամ;<br>4. Տրանսպորտային միջոցի (RENAULT մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում կազմում է մոտ 2 060 000 ՀՀ դրամ,<br>5. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ կազմում է մոտ 1 190 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>5.1 հեռախոսի վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ,<br>5.2 ինտերնետի վարձավճար՝ 240 000 ՀՀ դրամ,<br>5.3 գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 650 000 ՀՀ դրամ:<br>6 Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում կազմում է մոտ 5 000 000 ՀՀ դրամ; |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 01.01.2018 – 31.12.2018 թվականի համար կազմում են մոտ 8 850 000 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 18.81 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ կազմում է մոտ 600 000 ՀՀ դրամ,<br>2. Տրանսպորտային միջոցի (RENAULT մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում կազմում է մոտ 2 060 000 ՀՀ դրամ,<br>3. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ՝ կազմում է մոտ 1 190 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1. հեռախոսի վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ,<br>3.2. ինտերնետի վարձավճար՝ 240 000 ՀՀ դրամ,<br>3.3. գրասենյակային պարագաներ՝ 650 000 ՀՀ դրամ:<br>4. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում կազմում է մոտ 5 000 000 ՀՀ դրամ; |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության ասպեկտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1022 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 01.1/14-2/21377-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 02/14/20932-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 03/07-1/16059-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48119-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 72,848,000 դրամ արժողությամբ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08.13.1511 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի մայիսի 4-ին կնքված՝ N 07-0125-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի __________ կողմից
«10» նոյեմբերի 2017թ

## Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ)

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայաստանի երիտասարդական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ Կառավարությանն առընթեր և այլ գերատեսչական պատկանելիություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ:<br>Բնագավառը՝ գիտություն և կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 72 848 000 ՀՀ դրամ:<br>Այդ թվում դրամաշնորհի գումար՝ 67 200 000 ՀՀ դրամ:<br>Կազմակեպական ծախսեր՝ 5 648 000 ՀՀ դրամ:<br><br>Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Միջոցները ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ:<br>Ընդամենը 28 գիտական խմբեր,<br>Ընդհանուրը՝ 112 գիտնականներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2018 – 30.01.2019 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմ. կոմիտեին (Հետազոտական խորհրդին), որը համապատասխան մասնագիտությունների |

2

| | | |
|---|---|---|
| | | առաջատար գիտնականներին է ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով տարբեր գիտնականների եզրակացությունները գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ՝ հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը:Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ՝ ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովը տարին 2 անգամ այցեր է կատարում գիտական խմբեր ընթացքին ծանոթանալու նպատակով:<br><br>Ծրագրի 1-ին փուլ.01.01.2018թ. – 01.07.2018թ.<br>Ծրագրի 2-րդ փուլ. 01.07.2018թ. – 30.01.2019թ.<br><br>Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է հունվար 2018թ. գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին /հուլիս, 2018թ./:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 72 848 000 ՀՀ դրամ, որից 67 200 000 ՀՀ դրամ գումարը տրամադրվում է 28 գիտական խմբերին, որպես դրամաշնորհ, յուրաքանչյուրին՝ 2 400 000 ՀՀ դրամ, իսկ 5 648 000 ՀՀ դրամ գումարը հանդիսանում է կազմակերպական ծախս, որն ներառում է.<br><br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 100 000<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000<br>Կոմունալ ծախսեր 3 000 000<br>Տպագրական ծախսեր 500 000 |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | բնական գազի ձեռքբերում 01.01.2018-31.12.2018թ թվականի ընթացքում, ընդհանուր գումար՝ 2 300 000 դրամ՝ պայմանագիր N 015 08.13.1511, կնքված 07.07.2013 թ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի (Երևանի ԳԳՄ, ՀՀ, ք, Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317), պետական գրանցման վկայականի ներդիր 020-ով վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>ջրամատակարում 01.01.2018 - 31.12.2018 թվականի ընթացքում, ընդհանուր գումար՝ 700 000 դրամ, պայմանագիր N 07-0125-22, կնքված 04,05,2017 «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (Երևան, Աբովյան 66ա, ՀՎՀՀ 02655115) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 01.01.2018-31.12.2018 թվականի ընթացքում, ընդհանուր գումար՝ 48 000 դրամ, պայմանագիր N 010957156 կնքված 28.11.06թ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (նախկին անվանումը՝ «Արմենիա Տելեֆոն |

| | | |
|---|---|---|
| | | Կոմպանի» ՓԲԸ) (ք. Երևան, Աhարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է այդ թվում 5 648 000 ՀՀ դրամ, ընդհանուր արժողության 7,75 %: Ծրագրի սպասարկումը ներառում է.<br><br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 100 000<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000<br>Կոմունալ ծախսեր 3 000 000<br>Տպագրական ծախսեր 500 000 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ ԳԱԱ, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, իսկ եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1023 - Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 01.1/14-2/21374-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20ի N 02/14/20840-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/12161-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/25172-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 95,450,000 դրամ արժողությամբ «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի հունիսի 14-ին կնքված՝ N 2017/601 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2017 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N 01/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Մարգսյանի կողմից
«10» նոյեմբերի 2017թ

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2018թ իրականացվող
«Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին»
Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը:<br><br>Ներկայումս ծրագրում ընդգրկված են 950 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 450 000 ՀՀ դրամ:<br>Որից՝<br><br>դրամական օգնություն 91 200 000 ՀՀ դրամ,<br>կազմակերպական ծախսեր 4 250 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 951 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝<br>Սյունիքի մարզից 237,<br>Շիրակի մարզից 90,<br>Տավուշի մարզից 51,<br>Արարատի մարզից 354, |

2

| | | |
|---|---|---|
| | | Արմավիրի մարզից 32,<br>Արագածոտնի մարզից 48,<br>Կոտայքի մարզից 61,<br>Գեղարքունիքի մարզից 28,<br>Ջավախքից 50 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2018 – 31.12.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:<br>Ընդհանուր գումարը՝ 91 200 000 ՀՀ դրամ:<br>2. Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br><br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br><br>Կազմակերպական ծախսեր՝ 4 250 000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 450 000 ՀՀ դրամ: |
*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/21035-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N ՆՁ/22.2/14324-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48122-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի էլեոնորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (1 տեղ, 6.200 կգ ընդհանուր քաշով, 200 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 89 շվեյցարական ֆրանկ, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1029 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/21020-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/12159-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/48409-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (52 տեղ, 1,430 կգ ընդհանուր քաշով, 6,506.31 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 1,506.31 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է՝ CAIU 986273-3: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 6506.31 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 1506.31 ԱՄՆ դոլար, քաշը՝ 1430.00 կգ, տեղերի քանակը 52:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Միսիանի և Գորիսի տարածաշրջան) |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

15/3.18

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական հագուստ | | 553.96 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 400 | Հատ | Մանկական հագուստ | | 276.98 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 500 | Հատ | Մանկական հագուստ | | 346.23 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 400 | Հատ | Մանկական հագուստ | | 276.98 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 896 | Հատ | Մանկական հագուստ | | 620.48 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 1430.00 | 6506.31 | |

02628755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1030 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1239-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/20962-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 01/18.2/7474-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48121-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում» ծրագրի մասին» N Մ-1239-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիար Արամայիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02234668) 2017 թվականի նոյեմբերի 8-ին կնքված՝ N 4/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի մարզի Ծաղկաշեն համայնքում ոռոգման մայր ջրագծի կառուցման համար անհրաժեշտ երկաթբետոնե կիսախողովակի և սալի մատակարարում՝ 7,343,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1031 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 01.1/14-2/21601-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 06/3-8/49155-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա, 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա, նոյեմբերի 11-ի N Մ-1094-Ա և 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N Մ- 876 - Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Արմսոլար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00462722) 2017 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N ԱՋՀ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ջրատաքացուցիչների համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 23,806,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08805672) 2017 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված N 10102017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հենասյուների պատրաստում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1032 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21748-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49594-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիփիլիթաս» հիմնդրամի հետ (ՀՎՀՀ՝ 02589506) 2017 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N 2042-10117 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա երկխոսություն Բեռլին» ֆիլմի ստեղծում՝ 7,717,868 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1033 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-884-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/80-2/21031-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48111-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2017 թվականի նոյեմբերի 9-ի N ՀՀՀ. 5/27-569 գրությունը,* ***ո ր ո շ ու մ*** *է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-884-Ա որոշման 1-ին կետում «Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ Արցախի Ազատամարտի հաշմանդամ վետերանների միջև բաշխելու համար» բառերը փոխարինել «Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի ազատամարտի վետերան հաշմանդամներին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1034 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-901-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/80-2/21985-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/48413-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 9-ի N ՀՀՀ. 5/27-570 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)**» N Մ-901-Ա որոշման 1-ին կետում «Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ Արցախի Ազատամարտի հաշմանդամ վետերանների միջև բաշխելու համար» բառերը փոխարինել «Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի ազատամարտի վետերան հաշմանդամներին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1035 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N Մ-371-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/20964-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48112-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի մանուկների հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 8-ի N COAF 163 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N Մ-371-Ա որոշման 1-ին կետում «95,786,000 դրամի չափով» բառերը փոխարինել «104,277,590 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1036 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/80-2/20961-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48117-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 3-ի 263-17 ԱՔ/ՆՎ գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1078-Ա (2016 թվականի դեկտեմբերի 2-ի Մ-1156-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «867,798,170.58 դրամ» բառերը փոխարինել «868,398,170.58 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ա. Եսայան
«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
«01» նոյեմբերի 2017թ.

«Կոտայքի մարզ,Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ▪ Իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;<br>▪ Մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;<br>▪ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 3 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և զուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորդանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որը ապրում և աշխատում է այդ տանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Կոտայքի Մարզ, գ. Կոտայք, Հերման-Գմայների փողոց 1:<br>ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղը գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 13 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) կողմից հատկացված [illegible] |

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին:<br>01.01.2016 - 31.12.2018 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 868 398 170.58 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա:<br>Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև «սոցիալապես որբացած» և լքված երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 01.01.2016 - 31.12.2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 203 649 630.78 ՀՀ դրամ (որից 63 668 190.78 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2. Ճուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 88 437 514.80 ՀՀ դրամ,<br>2.1 Նախասիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ ՍՕՍ-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ թերհաճախած երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային պարապմունքների կազմակերպում և ուսումնական հաստատություններում վճարովի հոսքերում սովորողների ուսման վարձեր (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում )՝ 29 946 514.80 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2.2. մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, թատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ՝ 6 777 000 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ 51 714 000 ՀՀ դրամ;<br>*Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը* |



| | | |
|---|---|---|
| | | *առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կնքված պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*<br>3. Ճուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ 3 տարվա համար կազմում է մոտ 11 700 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>3.1 երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասասարկման ապահովում՝ 4 500 000 ՀՀ դրամ<br>3.2 հոգեբանական աջակցություն երեխաներին՝ 7 200 000 ՀՀ դրամ<br>4. Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 48 631 722 ՀՀ դրամ (որից 1 387 446 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>5. Գույքի ձեռքբերում և վերանորոգում ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 33 930 000 ՀՀ դրամ:<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 313 716 822 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>6.1 ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 173 621 034 ՀՀ դրամ; թվով 13 աշխատակից<br>6.2 ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 63 146 046 ՀՀ դրամ; թվով 12 աշխատակից<br>6.3 մանկավարժական և բժշկական անձնակազմ՝ 64 993 896 ՀՀ դրամ; թվով 6 աշխատակից<br>6.4 դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 11 955 846 ՀՀ դրամ; թվով 1 աշխատակից<br>7. Կազմակերպական ծախսերը՝ 3 տարվա համար կազմում են մոտ 168 332 481 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 139 981 440 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. սննդի ձեռքբերում՝ 91 879 200 ՀՀ դրամ<br>1.2. լվացող նյութերի և հիգիենայի պարագաների ձեռքբերում՝ 9 526 320 ՀՀ դրամ<br>1.3. հագուստի և կոշիկի ձեռքբերում՝ 38 575 920 ՀՀ դրամ<br>2. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 51 714 000 ՀՀ դրամ<br>3. Գույքի ձեռքբերում և վերանորոգում ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 33 930 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1. Մանկ[illegible] [illegible] տարածքի և շենքի [illegible] |

| | | |
|---|---|---|
| | | էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 21 120 000 ՀՀ դրամ;<br>3.2. կահույքի ձեռք բերում և վերանորոգում՝ 2 460 000 ՀՀ դրամ;<br>3.3. էլեկտարական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, փոշեկուլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 10 350 000 ՀՀ դրամ;<br>4. Հանրային կապեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 2 610 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1. ֆիլմերի և լուսանկարների ձեռքբերում՝ 930 000 ՀՀ դրամ;<br>4.2. գովազդային նյութերի և տպագրությունների ձեռքբերում՝ 1 080 000 ՀՀ դրամ;<br>4.3. արտաքին միջոցառումներ (ֆուրշետներ և տոնակատարություններ)՝ 600 000 ՀՀ դրամ;<br>5. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 9 990 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>5.1. հեռախոսի վարձավճար՝ 3 048 000 ՀՀ դրամ;<br>5.2. ինտերնետի վարձավճար՝ 2 052 000 ՀՀ դրամ;<br>5.3. փոստային առաքումների վարձավճար՝ 2 370 000 ՀՀ դրամ;<br>5.4. գրասենյակային պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 2 520 000 ՀՀ դրամ;<br>6. Տրանսպորտային միջոցների (ՎԱԶ 212300-55L ՇԵՎՐՈԼԵ-ՆԻՎԱ, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Mistubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAY մակնիշի ավտոբուս) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 23 135 850 ՀՀ դրամ:<br>7. Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր) ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 47 244 276 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>7.1. ջրամատակարարման վարձավճար՝ 900 000 ՀՀ դրամ;<br>7.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 26 075 826 ՀՀ դրամ;<br>7.3. գազամատակարարման վարձավճար՝ 18 994 050 ՀՀ դրամ;<br>7.4. աղբահանության վարձավճար՝ 1 274 400 ՀՀ դրամ; |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 01.01.2016 - 31.12.2018 թվականների համար կազմում են մոտ 168 332 481 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 19.38 տոկոսը :<br>Այդ թվում՝<br>1. Հանրային կապեր ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 2 610 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. ֆիլմեր և լուսանկարներ՝ 930 000 ՀՀ դրամ;<br>1.2. գովազդային նյութեր և տպագրություններ՝ 1 080 000 ՀՀ դրամ;<br>1.3. արտաքին միջոցառումներ՝ 600 000 ՀՀ դրամ:<br>2. Աշխատակազմի ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 130 802 631 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>2.1 աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) և կենսաթոշակի անցած ՍՕՍ-մայր դաստիարակի հավելավճար (վճարվում է համաձայն ներքին կանոնակարգի)՝ 116 620 431 ՀՀ դրամ; |



| | | |
|---|---|---|
| | | 2.2 աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ 6 000 000 ՀՀ դրամ;<br>2.3 ՍՕՍ-մայր դաստիարակների և նրանց օգնականների մասնագիտական խորհրդատվություն մասնագետ հոգեբանների կողմից՝ 4 204 200 ՀՀ դրամ;<br>2.4 աշխատակիցների բուժսպասարկման և պարտադիր բժշկական զննության ծախսեր՝ 3 978 000 ՀՀ դրամ<br>3. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 9 990 000 ՀՀ դրամ; այդ թվում՝<br>3.1 հեռախոսի վարձավճար 3 048 000 ՀՀ դրամ;<br>3.2 ինտերնետի վարձավճար 2 052 000 ՀՀ դրամ;<br>3.3 փոստային առաքումների վարձավճար 2 370 000 ՀՀ դրամ;<br>3.4 գրասենյակային պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 2 520 000 ՀՀ դրամ;<br>4. Այլ ընթացիկ և չնախատեսված ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 1 794 000 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>4.1 ապահովագրություն՝ 378 000 ՀՀ դրամ,<br>4.2 բանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր և այլն՝ 1 416 000 ՀՀ դրամ,<br>5. Տրանսպորտային միջոցների (ՎԱԶ 212300-55L ՇԵՎՐՈԼԵ-ՆԻՎԱ, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Mistubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAY մակնիշի ավտոբուս) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 23 135 850 ՀՀ դրամ, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1037 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1339-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/80-2/20967-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48115-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 3-ի 262-17 ԱՔ/ՆՎ գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1339-Ա (2016 թվականի դեկտեմբերի 2-ի Մ-1153-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «836,074,617 դրամ» բառերը փոխարինել «836,674,617 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ա. Եսայան
«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
«01» նոյեմբերի 2017թ.

«Տավուշի մարզ,Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ▪ Իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;<br>▪ Մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;<br>▪ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 4 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և զուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորդանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որն ապրում և աշխատում է այդ տանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Տավուշի Մարզ, ք. Իջևան,Երևանյան 10<br>ՍՕՍ Մանկական Գյուղ « Իջևան » մասնաճյուղը գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքի քաղաքապետարանի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 1.7 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 14 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, |

| | | |
|---|---|---|
| | | Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 01.01.2016 - 31.12.2018 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 836 674 617 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գ-յուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա:<br>Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 01.01.2016 - 31.12.2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ 3 տարվա համար կազմում է 253 667 595 ՀՀ դրամ (որից 72 121 335 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2. Շուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզամշակութային միջոցա-ռումների և ամառային հանգստի կազմակերպում՝ 3 տարվա համար կազմում է 97 689 000 ՀՀ դրամ:<br>2.1. Նախասիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ ՍՕՍ-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ թերհաճախած երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային պարապմունքների կազմակերպում և ուսումնական հաստատություններում վճարովի հոսքերում սովորողների ուսման վարձեր (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում )՝ 23 299 500 ՀՀ դրամ:<br>2.2 մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, թատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ 1 293 000 ՀՀ դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ 73 096 500 ՀՀ դրամ;<br>*Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային* |



| | | |
|---|---|---|
| | | *համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կնքված պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*<br>3. Շուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ 3 տարվա համար կազմում է մոտ՝ 4 809 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>3.1. երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասարկման ապահովում՝ 2 829 000 ՀՀ դրամ<br>3.2. հոգեբանական աջակցություն երեխաներին՝ 1 980 000 ՀՀ դրամ<br>4. Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 35 133 060 ՀՀ դրամ:<br>5. Գույքի ձեռքբերում և վերանորոգում ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 13 170 000 ՀՀ դրամ:<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 280 816 218 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>6.1. ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 152 315 529 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից<br>6.2. ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 63 538 074 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից<br>6.3. մանկավարժական և բժշկական անձնակազմ՝ 55 514 142 ՀՀ դրամ; թվով 6 աշխատակից<br>6.4. դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 9 448 473 ՀՀ դրամ; թվով 1 աշխատակից<br>7. Կազմակերպական ծախսերը 3 տարվա համար կազմում է մոտ 151 389 744 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 181 546 260 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. սննդի ձեռքբերում՝ 116 159 400 ՀՀ դրամ<br>1.2. լվացող նյութերի և հիգիենայի պարագաների ձեռքբերում՝ 12 379 500 ՀՀ դրամ<br>1.3. հագուստի և կոշիկի ձեռքբերում՝ 49 173 540 ՀՀ դրամ<br>1.4. բնամթերքի ձեռքբերում՝ 3 833 820 ՀՀ դրամ<br>2. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային առողջարանային համալիրներում՝ 3 տարվա համար կազմում է մոտ 73 096 500 ՀՀ դրամ;<br>3. Գույքի ձեռքբերում և վերանորոգում ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 13 170 000 ՀՀ դրամ, այդ թվում՝ |

| | | |
|---|---|---|
| | | 3.1. մանկական գյուղի տարածքի և շինությունների (ընտանեկան տներ, ոռոգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 5 670 000 ՀՀ դրամ;<br>3.2. կահույքի վերանորոգում՝ 150 000 ՀՀ դրամ;<br>3.3. էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, փոշեկուլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 7 350 000 ՀՀ դրամ;<br>4. Հեռահաղորդակցություն ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 7 818 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1. հեռախոսի վարձավճար 2 268 000 ՀՀ դրամ;<br>4.2. ինտերնետի վարձավճար 3 120 000 ՀՀ դրամ;<br>4.3. փոստային առաքումների վարձավճար 2 430 000 ՀՀ դրամ;<br>5. Տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 22 387 380 ՀՀ դրամ<br>6. Խորհրդատվական ծառայություն՝ 3 տարվա համար կազմում է մոտ 6 000 000 ՀՀ դրամ;<br>7. Աուդիտորական ծառայություն՝ 3 տարվա համար կազմում է մոտ 13 500 000 ՀՀ դրամ;<br>8. Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ 3 տարվա համար կազմում է մոտ 35 133 060 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>8.1. ջրամատակարարման վարձավճար՝ 2 473 200 ՀՀ դրամ;<br>8.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 6 651 360 ՀՀ դրամ;<br>8.3. գազամատակարարման վարձավճար՝ 25 708 500 ՀՀ դրամ;<br>8.4. աղբահանության վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը՝ 01.01.2016 - 31.12.2018 թվականների համար, կազմում են մոտ 151 389 744 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 18.09 տոկոսը :<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 97 886 364 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>1.1 աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) ՝ 85 431 360 ՀՀ դրամ, թվով 8 աշխատակից,<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ 12 455 004 ՀՀ դրամ;<br>2. Տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութի ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 22 387 380 ՀՀ դրամ,<br>3. Հեռահաղորդակցություն ՝ 3 տարվա համար կազմում է մոտ 7 818 000 ՀՀ դրամ; այդ թվում՝ |



| | | |
|---|---|---|
| | | 3.1 հեռախոսի վարձավճար 2 268 000 ՀՀ դրամ;<br>3.2 ինտերնետի վարձավճար 3 120 000 ՀՀ դրամ;<br>3.3 փոստային առաքումների վարձավճար 2 430 000 ՀՀ դրամ;<br>4. Այլ ընթացիկ և չնախատեսված ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ՝ 3 798 000 ՀՀ դրամ; այդ թվում՝<br>4.1. ապահովագրություն՝ 2 655 000 ՀՀ դրամ;<br>4.2. բանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր և այլն՝ 1 143 000 ՀՀ դրամ:<br>5. Խորհրդատվական ծառայություն՝ 3 տարվա համար կազմում է մոտ ՝ 6 000 000 ՀՀ դրամ:<br>6. Աուդիտորական ծառայություն՝ 3 տարվա համար կազմում է մոտ 13 500 000 ՀՀ դրամ; |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1038 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-597-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (SOAR) - ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 01.1/14-2/21474-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի 24-ի N 06/3-8/49153-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 14-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Հատուկ սարքավորումների, պարագաների տրամադրում երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններին» ծրագրի մասին» N Մ-957-Ա (2017 թվականի նոյեմբերի 10-ի N Մ-973-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված ծրագրի 1-ին և 7-րդ կետերում ներկայացված հաստատություններին ավելացնել «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ, «Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղ», «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ» բառերը.

2) որոշմամբ հաստատված ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Չորակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

| | Նկարագրություն | Չ/Մ | Քանակ | Միավորի արժեք ԱՄՆ դոլլար | Ընդամենը ԱՄՆ դոլլար |
|---|---|---|---|---|---|
| 01 | Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | արկղ | 16 | 582.04 | 9,312.64 |
| 02 | Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | արկղ | 1 | 978.06 | 978.06 |
*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 01/14-2/21509-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 02/14/21370-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/12332-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 06/3-8/49149-17 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 01/7937-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացի, 50/4, ՀՎՀՀ՝ 05532775) կողմից իրականացվող՝ 4,990,000 դրամ ընդհանուր արժեքով «Մարդասիրական օգնություն Գյումրու ժամանակավոր կացարաններում բնակվող անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ից բարերար Վարդան Նազարյանի կողմից որպես նվիրատվություն ուղարկված՝ Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը («Used wood Log splitter», TCNU5783054, Seal No TRT34692 փայտի ջարդման մեքենա՝ 195 կգ ընդհանուր քաշով, 499 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 100 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Հյուսիսային» մաքսատուն - վարչություն) ներմուծվում է վերը նշված ծրագրի իրականացման շրջանակներում:

3. Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական



ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
,Շիրակ կենտրոն՟ ՀԿ
Նախագահ՝ Վահան Թումասյանի կողմից

« 17» նոյեմբեր , 2017թ.

*Մարդասիրական օգնություն Գյումրու ժամանակավոր կացարաններում բնակվող անապահով ընտանիքներին*

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Գյումրու տնակային ավաններում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին ձմռան վառելափայտի տրամադրում: Փայտի ջարդման մեքենայի ներմուծում ձմռան վառելափայտի ջարդման, պատրաստման և տրամադրման նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով արտոնությունների սահմանում: |
| 3 | Բարեգործը | Վարդան Նազարյանը ԱՄՆ<br>20 Verimus Lane<br>New Jersey, USA<br>Tel: +12013706921 |
| 4 | Ծրագիրը կատարողը | Շիրակ կենտրոն ՀԿ, ՀՎՀՀ 05532775 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի, սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | 4 990 000 դրամ, (չորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Գյումրու տնակային ավանների ժամանակավոր կացարաններում բնակվող 235 անապահով ընտանիքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 4 ամիս տևողությամբ, 01 դեկտեմբերի 2017 թ – 31 մարտի 2018 թ: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ապրանքի ստացումից և 15 կամավորների օգնությամբ պահեստավորումից հետո կկազմակերպվի ձեռք բերված ձմռան վառելափայտի ջարդման, պատրաստման, աշխատանքները և այն կբաժանվի Գյումրու տնակային ավանների ժամանակավոր կացարաններում բնակվող 235 անապահով ընտանիքներին:<br><br>Ծրագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Փայտ ջարդելու օգտագործված սարքավորում (Used wood Log Splitter, 195 Kgs, TCNU5783054, Seal No.TRT34692), արժեքը 499 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ, բեռնափոխադրում 50.000 ՀՀ դրամ, վառելափայտի արժեքը՝ 4.700.000 ՀՀ դրամ: Կից ներկայացվում է ստացված մարդասիրական օգնության մանրամասն ցանկը և արժեքը: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն կիրականացվի Գյումրու քաղաքապետարանի և ավագանու անդամների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կիրականացվի «Շիրակ կենտրոն» կազմակերպության խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի կողմից, որը հաշվետվության տեսքով կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ինչպես նաև կազմակերպության ընդհանուր ժողովին: |

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**01 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1049- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21771-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49464-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել բարերար Միհրան Բարոնյանի կողմից, որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով Շվեյցարիայից ստացված բեռի (քիմիական լաբորատորիայի կահույք՝ իր բաղադրամասերով՝ 6 տեղ, 4,151 կգ ընդհանուր քաշով, 34,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր պյժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 3,100 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատունվարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ ԵՄ,**
<<Երևանի Պետական Համալսարան>>
հիմնադրամի ռեկտոր

Ա.Հ. Սիմոնյան ____________

## Քիմիական լաբորատորիայի կահույք (մասնացուցակ)

| N: | Անուն | Քանակ (հատ) |
|---|---|---|
| 1. | Լաբորատոր կահույք երկու քարշիչ պահարանով 150 x 90 x 275 սմ | 1 |
| 2. | Լաբորատոր կահույք երկու քարշիչ պահարաններով 150x90x275 սմ, Սեղանի տակ դրվող միավոր և կախովի պահարան | 1 |
| 3. | Լաբորատոր կահույք, սեղանի տակ դրվող միավոր մեդիա սյունով | 1 |
| 4. | Լաբորատոր կահույք <<Waldner>> մակնիշի քարշիչ պահարան MC6 150սմ | 2 |
| 5. | Լաբորատոր կահույք <<Waldner>> մակնիշի քարշիչ պահարան MC6 180սմ | 1 |

| | |
|---|---|
| Արժեքը | 31300 ԱՄՆ դոլար |
| Առաքումը | 3100 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 34400 ԱՄՆ դոլար |

* Սույնով հաստատվում է, որ վերը թվարկվածները նվիրաբերվել են Երևանի պետական համալսարանին (ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյանի 1):
Կահույքը նախատեսված է քիմիական լաբորատորիայի համար և նվիրաբերվել է նվիրատուի կողմից: Այն ոչ մի կոմերցիոն կամ մաքսային արժեք չունի: Ընդհանուր գինը կազմում է 34400 ԱՄՆ դոլար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1050 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԿԽԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/14-2/20235-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 02/14/19949-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 8-ի N 06/3-8/46606-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) կողմից իրականացվող՝ 37,028,031 դրամ արժողությամբ «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից
02. 11. 2017թ.

## «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ»

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը | Հայկական Կարմիր Խաչի ընկերության (ՀԿԽԸ) Կենտրոնական Գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ ՀԿԽԸ շահառուներին մատուցվող ծառայությունների բարելավված միջավայրի ստեղծման նպատակով: |
| դ2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Կարմիր Խաչի Միջազգային կոմիտե(ԿԽՄԿ), Ավստրիական Կարմիր խաչ, Իրանական Կարմիր մահիկ, ՄԱԿ-ի Փախստականների Գերագույն Հանձնակատարի Հայաստանյան գրասենյակ |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պարոնյան 21/1, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 37 028 031 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայկական Կարմիր Խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական, առաջին օգնության, բնակչության տեղաշարժի, երիտասարդական ուղղությունների և |

| | | |
|---|---|---|
| | | այլ ծրագրերի շրջանակներում ընդգրկվածշահառուները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.11.2017թ-31.05.2018թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայկական Կարմիր խաչի ընկերության, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված է 15.11.2017-31.05.2018 ժամանակահատված և 37 028 031 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայկական Կարմիր խաչի ընկերության, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված են 37 028 031 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների | Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀԿԽԸ կողմից աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության:<br><br>Նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն:<br><br>ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի համակարգման Հանձնաժողովին սահմանված կարգով ներկայացվելու են հաշվետվություններ: |

16/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1051 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՑՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 01.1/814-2/21208-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 27-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/12270-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/48402-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «Օգնություն սահմաններից դուրս» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (մեծահասակների օգտագործված հագուստ,մանկական նոր հագուստ և կոշիկներ, նոր խաղալիքներ, մանկական տակդիրներ, ուսապարկեր և դպրոցական պարագաներ՝ 970 կգ ընդհանուր քաշով, 1,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 400 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արցախյան ազատամարտին մասնակցած, հաշմանդամություն ստացած անձանց, զոհվածների ընտանիքներին, «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության անդամների և սահմանամերձ տարածքներում ապրող սոցիալապես անապահով անձանց համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների ձևակերպումը և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Հումանիտար բեռ ստացողների անվանացանկ

| ՀՀ ՊՆ հաշմանդամություն ունեցող անդամներ | | |
|---|---|---|
| | Ա.Ա.Հ. | Հաշ. Խումբ |
| 1 | Աղամյան Վաչիկ | 3-անժամկետ |
| 2 | Աթանյան Վահե | 3-կրկնակի |
| 3 | Ասատրյան Սամվել | 2-անժամկետ |
| 4 | Ավագյան Սուրեն | 2-անժամկետ |
| 5 | Բաբայան Տիգրան | 1-Անժամկետ |
| 6 | Բայանդուրյան Ալեքսան | 2-անժամկետ |
| 7 | Գալստյան Արթուր | 1-Անժամկետ |
| 8 | Գևորգյան Խաչիկ | 1-Անժամկետ |
| 9 | Գևորգյան Սմբատ | 3-անժամկետ |
| 10 | Գրիգորյան Միեր | 2-Անժամկետ |
| 11 | Դանիելյան Գագիկ | 1-Անժամկետ |
| 12 | Դավթյան Հակոբ | 2-անժամկետ |
| 13 | Եփրեմյան Էմանուել | 3-անժամկետ |
| 14 | Զալիբեկյան Սերգո | 3-անժամկետ |
| 15 | Զալիբեկյան Վազգեն | 2-Անժամկետ |
| 16 | Կարապետյան Հունան | 2-անժամկետ |
| 17 | Կրպեյան Գագիկ | 1-Անժամկետ |
| 18 | Հարությունյան Ահարոն | 1-Անժամկետ |
| 19 | Հովհաննիսյան Մակիչ | 2-անկժամկետ |
| 20 | Հովնանյան Վանիկ | 1-անժամկետ |
| 21 | Ղասաբյան Շիրակ | 2-անժամկետ |
| 22 | Մանուկյան Հրաչյա | 1-անժամկետ |
| 23 | Մարտիրոսյան Վարդան | 2-անժամկետ |
| 24 | Մինասյան Սամվել | 2-անժամկետ |
| 25 | Մկրտչյան Գևորգ | 1-Անժամկետ |
| 26 | Մովսիսյան Արա | 3-անժամկետ |
| 27 | Նազարեթյան Ռոբերտ | 1-Անժամկետ |
| 28 | Պապյան Յուրիկ | 2-անժամկետ |
| 29 | Պետրոսյան Անդրանիկ | 1-Անժամկետ |
| 30 | Ջալալյան Ռուդիկ | 1-Անժամկետ |
| 31 | Ռուստամյան Միեր | 2-անժամկետ |
| 32 | Սահակյան Շամիր | 3-անժամկետ |
| 33 | Սարգսյան Աղավնի | 2-անժամկետ |
| 34 | Սարգսյան Էրիկ | 1-Անժամկետ |
| 35 | Սաֆարյան [illegible] | 2-Անժամկետ |
| 36 | Ստե[illegible] Ռազմիկ | 2-Անժամկետ |
| 37 | Քար[illegible] | 1-Անժամկետ |
| 38 | Օհ[illegible] Վարդան | 2-անժամկետ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1052 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20ի N 01.1/14-221129/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 06/3-8/48602-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված կաթի սարքավորումները (501.9 կգ ընդհանուր քաշով, 40,077.15 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1053- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 14-ի N 01.1/14-2/20784-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 06/3-8/48113-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալ Պառկո հյուրանոց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02633149) 2017 թվականի նոյեմբերի 6-ին կնքված պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 210,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1054- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-779-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 01.1/14-2/21603-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 06/3-8/48612-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ճանապարհային քարտեզ համայնքի դիմակայունության համար» ծրագրի մասին» N Մ-779-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի նոյեմբերի 17-ին կնքված պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Պրեմիում» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 378,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1055- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-1145-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 07/14-2/21602-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 06/3-8/48826-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների և արտերկրից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում» ծրագրի մասին» N Մ-1145-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

1. Սահմանել, որ «Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01505795) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00005614) 2017 թվականի նոյեմբերի 15-ին կնքված՝ N 200/ԾՊ-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հանրակացարանում սենյակների վարձակալություն՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

15/10

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» ՀԿ վարչության կողմից
«09» սեպտեմբերի 2015թ.
Փոփոխությունները կատարված են՝
«20» նոյեմբերի 2017թ.

# ԾՐԱԳԻՐ

**Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների և արտերկրից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների կազմակերպում և Հայաստանում արտասահմանից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում:<br>Հայ և արտասահմանցի կամավորների գործունեության կազմակերպումը Հայաստանում բացվող աշխատանքի միջազգային կամավորական ճամբարներում, որտեղ կամավորները անվարձահատույց կատարում են սոցիալական, երեխաների էսթետիկական դաստիարակության, շինարարական, էկոլոգիական, վերանորոգման, հիվանդ երեխաների, երեխաների աջակցության հիմնարկների սաների խնամքի և ազատ ժամանցի կազմակերպման աշխատանքներ:<br>Կազմակերպել երկարաժամկետ (6 ամսից մինչև 1 տարի) կամավորների կամավորական աշխատանքը և կացությունը Հայաստանում:<br>Հոգ տանել ծնողազուրկ, հաշմանդամ և սակավ հնարավորություններ, տեղական, խոսքի և լսողական խանգարումներ, լեյկեմիա, մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների նկատմամբ:<br>Իրականացնել պատմամշակութային ժառանգության կոթողների և շրջակա միջավայրի պահպանության ուղղված միջոցառումներ: Երիտասարդներին հնարավորություն ընձեռել և խթանել անվճար, հանրօգուտ աշխատանքներ կատարելու: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղվածության նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարներից օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ, «Գլոբալ Էյդ Նեթվորք» (ԳԷՅՆ), «Սիմոնյան» կրթական բարեգործական հիմնադրամ: |
| 4. | Ծրագրի կատարողը | «Հայաստանի Ուսանողական Ջոկատների Հանրապետական Շտաբ-Կամավորական Աշխատանքների Ծառայություն» հասարակական կազմակերպություն, Երևան, Կորյուն 19ա, ՀՎՀՀ՝ 01505795: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն - Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն, Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոց, «Մուրացան» հիվանդանոցային համալիր, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղեր, Երևանի «Ջահիկ» երեխաների աջակցության կենտրոն, Երևանի Բուսաբանական այգի, Գեղարդավանք և «Զվարթնոց» արգելոց-թանգարանում, Լեհերի համագործակցության «Պոլոնիա» ՀԿ և մանկական բուժ. հիմնարկություններ, մանկատներ, հատուկ դպրոցներ՝ ըստ ներկայացված լրացուցիչ հայտերի, և կամավորների գործունեության կազմակերպում:<br>Վերը նշված ծրագրերի բնագավառներն են՝ սոցիալական, բժշկական, կրոնական, էկոլոգիական, կրթական, մշակութային, ազգային փոքրամասնությունների աջակցություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդամենը 36 000 000 դրամ<br>Ստացման ժամկետները մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 15-ը: |

15/10.3

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի, Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցի, «Մուրացան» հիվանդանոցային համալիրի, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղերի, Երևանի «Ջանիկ» երեխաների աջակցության կենտրոնի 500-550 ծնողազուրկ, սակավ հնարավորություններ և հաշմանդամություն, տեսողական, խոսքի և լսողական խանգարումներ, լեյկեմիա, մանկական ուղեղային կաթված և այլ հիվանդություններ ունեցող երեխաները:<br><br>Երևանի Բուսաբանական այգու այցելուները և Երևան քաղաքի բնակչությունը, քանի որ Բուսաբանական այգին ապահովում է ամբողջ քաղաքի օդի մաքրությունը:<br><br>Գեղարդավանքում և «Զվարթնոց» արգելոց-թանգարանի այցելուները և աշխատակազմը:<br><br>Լեհերի համագործակցության «Պոլոնիա» ՀԿ-ի ծրագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքներն ուղղված են Հայաստանում բնակվող լեհերին և լեհախոս բնակչությանը, որի նպատակն է պահել ազգային ինքնությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Վերը նշված վայրերում 2016-2020թթ. հուլիսի 1-ից օգոստոսի 30-ը միջազգային կամավորական ճամբարների գործունեության կազմակերպում, իսկ երկարաժամկետ կամավորների դեպքում (6 ամսից մինչև 12 ամիս) անհատ կամավորների կողմից ծրագրերի իրականացում:<br><br>Հայ կամավորները արտասահմանցի կամավորների հետ վերը նշված վայրերում կատարելու են հետևյալ աշխատանքները՝ երեխաների համար օտար լեզուների, նկարչության, պարի, երգի, թատերական խմբակների կազմակերպում, երեխաների աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, հայ և արտասահմանից ժամանած կամավորների և երեխաների ջանքերով թատերական բեմադրությունների և համերգների կազմակերպում, հիվանդասենյակների, խաղասենյակների, ննջասենյակների, դահլիճների, խաղահրապարակների, դասարանների, ինչպես նաև այլ տարածքների վերանորոգում, բարեկարգում: Բուսաբանական այգու տարածքի բարեկարգման, չոր և ծեր ծառերի կտրման, նոր արահետների բացման, բույսերի խնամքի աշխատանքների իրականացում: «Զվարթնոց» արգելոց-թանգարանի և Գեղարդավանքի տարածքների բարեկարգում և պահպանում: Պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ աշխատանքներ, գերաճած խոտերի և մոլախոտերի, ծառուղիների մաքրում, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ:<br><br>1. Յուրաքանչյուր տարի 7 ճամբարների կազմակերպման համար ֆինանսական միջոցների ծավալը կկազմի մոտ 2 100 000 դրամ, 5 տարիների համար 10 500 000, որից՝<br>• յուրաքանչյուր տարի ճամբարների համար ձեռք բերվող ապրանքատեսակներ, ծառայություններ, սննդամթերք – 1 200 000, 5 տարիների համար 6 000 000<br>• էքսկուրսիաներ - 300 000, 5 տարիների համար 1 500 000<br>• խաղեր և խաղալիքներ, գրենական պիտույքներ և դեղորայք ճամբարների համար - 300 000, 5 տարիների համար 1 500 000<br>• աշխատանքային գործիքներ, շինարարական նյութեր և տնտեսական ապրանքներ - 300 000 դրամ, 5 տարիների համար 1 500 000:<br>2. Միջազգային ISIC քարտերի, ցուցանակների, պաստառների, շապիկների ձեռքբերում – 100 000 դրամ, 5 տարիների համար 500 000:<br>3. Երկարաժամկետ կամավորների համար օթևան տրամադրելու վճարներ 2018 – 2020 թթ. տարեկան 6 000 000 դրամ, 3 տարվա համար 18 000 000:<br>4. Կազմակերպական ծախսերը 5 տարիների համար կկազմեն 3 400 000 դրամ:<br>5. Օգտագործված ավտոմեքենայի ձեռքբերման ծախս 5 տարիների համար շուրջ 3 600 000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կազմակերպական ծախս են հանդիսանում շտաբի գրասենյակի կոմունալ ծախսերը՝ ջուր, հոսանք, ինտերնետ, գրենական պիտույքներ, տպագրական ծախսեր և այլն:<br>Վերը նշված ծախսերը 5 տարիների համար կկազմեն 3 400 000 դրամ:<br>2. Օգտագործված ավտոմեքենայի ձեռքբերման ծախս՝ շուրջ 3 600 000 դրամ, քանի որ մեքենան ծառայում է Երևանում և Հայաստանի շրջաններում որպես ծրագրերի գործունեությունը վերահսկելու և պրակտիկ օգնություն ցուցաբերելու միջոց, այդ թվում՝ արտասահմանից ժամանած կամավորներին դիմավորելու, արտակարգ իրավիճակներում (հիվանդություններ, տրավմաներ) բժշկական հիմնարկություններ տեղափոխելու, բազմաթիվ տնտեսական գնումներ կատարելու, և ճամբարների համար սնունդ ու այլ անհրաժեշտ պարագաներ տեղափոխելու միջոց:<br>3. Երկարաժամկետ կամավորների համար օթևան տրամադրելու վճարներ – 3 տարի՝ 18 000 000 դրամի չափով, յուրաքանչյուր տարի 6 000 000 դրամ:<br>4. Ճամբարների կազմակերպման համար պահանջվող տարեկան ընդհանուր ծախսեր՝ 1 200 000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Կոմունալ ծախսեր՝<br>2016թ. - 400 000 դրամ,<br>2017թ. - 400 000 դրամ,<br>2018թ. - 300 000 դրամ,<br>2019թ. - 300 000 դրամ,<br>2020թ. - 300 000 դրամ:<br>• Գրասենյակային ծախսեր՝<br>2016թ. - 200 000 դրամ,<br>2017թ. - 300 000 դրամ,<br>2018թ. - 400 000 դրամ,<br>2019թ. - 400 000 դրամ,<br>2020թ. - 400 000 դրամ:<br>• Ընդամենը՝ 3 400 000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, կրթության և գիտության նախարարությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Մշտական հանդիպումներ ճամբարների, զրույցներ ծրագրի մասնակիցների հետ, մասնակցություն միջոցառումներին և կազմակերպչական բոլոր հարցերի քննարկում, հաշվետվությունների ընդունում և գնահատում, մասնակիցների կողմից լրացված գնահատման հարցաթերթիկների, ճամբարներ հյուրընկալող կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տրված բնութագրերի վերլուծություն:<br>3-րդ կետում նշված բարեգործական կազմակերպություններին տրվում են կատարված աշխատանքի և ֆինանսական ընթացիկ և ամփոփ հաշվետվություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1056- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21845-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50141-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը (մալուխ, անջատիչներ՝ 4 տեղ, 28.97 կգ ընդհանուր քաշով, 4,639 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի N Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1057- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N Մ-431-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21828-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49413-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 5-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» ծրագրի մասին» N Մ-431-Ա (2015 թվականի հունիսի 12-ի N Մ-612-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2017 թվականի նոյեմբերի 16-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջոցառում անցկացնելու համար դահլիճի և սարքավորումների սպասարկում՝ 187,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2017 թվականի նոյեմբերի 16-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջոցառում անցկացնելու համար դահլիճի և սարքավորումների սպասարկում՝ 187,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00079228) 2017 թվականի նոյեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդունելության կազմակերպում՝ 184,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1058- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1005-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 07/14-2/21980-17 և Հայաստանի Հանրապետության կառա-վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-3/-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 24-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնա-դրամի կողմից իրականացվող «ՓաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի մասին» N Մ-1005-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-061-Ա, մայիսի 15-ի N Մ-507-Ա և նոյեմբերի 5-ի N Մ-1172-Ա և 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-250-Ա, հուլիսի 1-ի N Մ-589-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1206-Ա և 2017 թվականի ապրիլի 3-ի N Մ-288-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2017թ. դեկտեմբերի 31, տևողությունը՝ 39.5 ամիս» բառերը փոխարինել «ավարտը՝ 2018թ. դեկտեմբերի 31» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «2017թ. դեկտեմբերին» բառերը փոխարինել «2018թ. դեկտեմբերին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1059-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-844-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Դեպի Հայք» հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 01.1/14-2/21597-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 06/3-8/49972-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Դեպի Հայք» հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 21-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի «Դեպի Հայք» հիմնադրամի կողմից իրականացվող «Դեպի Հայք» ծրագրի մասին» N Մ-844-Ա (2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-261-Ա և 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1371-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը՝

1) որոշման 2-րդ կետի 7-րդ ենթակետում «2018 թվականի դեկտեմբերի 31-ն» բառերը փոխարինել «2014 թվականի սեպտեմբերի 30-ն» բառերով և «2,400,000 դրամ» բառերը՝ «160,850 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 9-րդ ենթակետում «1,500,000 դրամ» բառերը փոխարինել «2,267,050» բառերով.

3) որոշման 2-րդ կետի 9-րդ ենթակետում 2018 թվականի բառերից առաջ լրացնել «2017 թվականի նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում՝ 1,472,100 դրամ, և» բառերով.

4) կից ծրագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում «2,400,000» թիվը փոխարինել «160,850» թվով.

5) կից ծրագրի 10-րդ կետի 4-րդ ենթակետում «1,500,000» թիվը փոխարինել «3,739,150» թվով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1060-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՆԱՆՑ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ ԽԱՂԱԴԱՇՏԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՏԱԾԱԾԿԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 01.1/14-2/21220-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/48412-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 22-ի N 02/14/20983-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 1/06/1450-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 121,259,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Բանանց» ֆուտբոլային ակումբի համար խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (125,000 կգ, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«10» նոյեմբերի 2017թ.

«Բանանց» ֆուտբոլային ակումբի համար խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով Երևանի Ջիվանի 2 հասցեում՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության համար, խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքի Ջիվանի 2 հասցեում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 121,259,500 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Ջիվանու 2, ՀՎՀՀ՝ 02565965): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 29-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արհեստական խոտածածկի, ռետինե գնդիկների, մարզագույքի, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի ներմուծում՝ 109,259,500 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 29-ը:<br>2. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ 12,000,000 դրամ՝ նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Խաղադաշտի արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 101290 եվրոյին համարժեք՝ 60,774,000 դրամ, մարզագույքի՝ 5430 եվրոյին համարժեք՝ 3,258,000 դրամ և արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի՝ 10250 եվրոյին համարժեք՝ 6,150,000 դրամ ներմուծում, որոնց փոխադրման ծախսերը կկազմեն 11400 եվրոյին համարժեք՝ 6,840,000 դրամ.<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների ներմուծում՝ 20000 եվրոյին համարժեք 12,000,000 դրամ, փոխադրման ծախսերը կկազմեն 28000 եվրոյին համարժեք 16,800,000 դրամ.<br>- կվարցային ավազի ներմուծում՝ 6875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 3,437,500 դրամ՝ ներառյալ փոխադրման ծախսերը.<br>- արհեստական խոտածածկերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 20000 եվրոյին համարժեք 12,000,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում: |
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21769-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49470-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 104 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը՝

1) 10-րդ կետի վերջին ենթակետում «160,000,000 դրամ» բառերը փոխարինել «110,000,000 դրամ» բառերով.

2) 10-րդ կետը լրացնել երկու նոր ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«- հուշանվերներ, կրծքանշաններ, հուշանմեդալներ, ժապավեններ և գրիչներ՝ 30,000,000 դրամ.

- տարբերանշանների տպագրման նյութեր և պարագաներ՝ 20,000,000 դրամ:»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1074-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21758-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49415-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 02/14/21559-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01/13.22/7525-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 96,119,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարչական շենքի վերանորոգում և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկ ինջինիըրինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02595146) 2017 թվականի նոյեմբերի 17-ին կնքված՝ N 171117/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դահլիճի օդափոխության համակարգերի տեղադրման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 3,119,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները



ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

ՂԵԿԱՎԱՐ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«17» նոյեմբերի 2017թ.

«Վարչական շենքի վերանորոգում և կահավորում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ֆուտբոլի բնագավառում իրականացվող միջոցառումների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլային միջոցառումների կազմակերպման, մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման և ակումբային պրոֆեսիոնալ ֆուտբոլի պատշաճ կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհատույց օգտագործման հանձնված վարչական շենքի մասնակի ընթացիկ վերանորոգում, կահավորում և հարակից տարածքի բարեկարգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի, Խանջյան 27 հասցեում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 96,119,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մասնակի վերանորոգման, կահավորման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 75,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը:<br>2. Շենքի չորրորդ հարկի դահլիճի ձայնային և լուսային համակարգերի, սարքավորումների տեղադրման աշխատանքներ՝ 8,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը:<br>3. Շենքի չորրորդ հարկի դահլիճի ջերմամատակարարման, օդափոխության, ջեռուցման համակարգերի տեղադրման և մոնտաժման աշխատանքներ՝ 3,119,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>4. Կահավորանքի ներմուծում՝ 10,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Շենքի մասնակի վերանորոգման, կահավորման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 75,000,000 դրամ.<br>- Շենքի չորրորդ հարկի դահլիճի ձայնային և լուսային համակարգերի, սարաքավորումների տեղադրման աշխատանքներ՝ 8,000,000 դրամ.<br>- Շենքի չորրորդ հարկի դահլիճի ջերմամատակարարման, օդափոխության, ջեռուցման համակարգերի տեղադրման և մոնտաժման աշխատանքներ՝ 3,119,000 դրամ.<br>- Կահավորանքի ներմուծում՝ 10,000,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1075-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 24-ի N 01.1/14-2/21604-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50103-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 1/06/1493-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Վոլեյբոլի եվրոպական կոնֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (վոլեյբոլի ցանցեր՝ 7 տեղ, 148 կգ ընդհանուր քաշով, 2,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 146,561 ճապոնական իեն, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1076-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21749-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49465-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 1/06/1492-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (2 տեղ, 46.6 կգ ընդհանուր քաշով, 4,415.21 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1077-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21841-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50066-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մշակված գրանիտե սալերը (109 տեղ, 204,210 կգ ընդհանուր քաշով, 79,002.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևելյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1078-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 01.1/14-2/22149-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50203-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից ձեռք բերված և Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված համակարգիչները (4 հատ՝ 4 տեղ, 24.32 կգ ընդհանուր քաշով, 5,260 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 448.06 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա, 2016 թվականի մարտի 18-ի N Մ-211-Ա և 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-025-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1079-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21842-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49417-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ջեյթուն» ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-896-Ա և 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-060-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01809336) 2017 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N ՀԱ-10/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գյուղատնտեսական սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1080-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 01.1/14-2/22042-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 06/3-8/50457-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Bureau d'Etudes Rodolphe Mattar» կազմակերպության հետ (72 Main Road, CIS Building, 3rd Floor, Jal El Dib, Lebanon) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N RM-PR-2015-164 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնստրուկտորական հսկողության ծառայությունների մատուցում՝ 10,625 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1081-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 01.1/14-2/22086-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50180-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2017 թվականի նոյեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 182,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1082-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-1273-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 4-ի N 01.1/14-2/22237-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50217-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 24-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1273-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «384,000,000 դրամ» բառերը փոխարինել «737,000,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ախուրյանի կոռպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2017 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 401,933,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2017 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 68-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1,800 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 75,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Bureau d'Etudes Rodolphe Mattar» կազմակերպության հետ (72 Main Road, CIS Building, 3rd Floor, Jal El Dib, Lebanon) 2017 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N RM-PR-2016-127 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնստրուկտորական հսկողության ծառայությունների մատուցում՝ 10,625 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) Acoustic Logic Consultancy կազմակերպության հետ (Office 907 Warsan Building, Dubai Internet City, UAE) 2017 թվականի նոյեմբերի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնամեկուսացման աշխատանքների խորհրդատվության ծառայությունների մատուցում՝ 12,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափազյանի կողմից

«30» Նոյեմբերի 2017թ

«Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով շենքային պայմանների ստեղծումն է: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | – Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը իրականացվելու է Ջի Էյչ ԷՄ բարեգործական հիմնադրամի կողմից՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության միջոցով (240,000,000 երկու հարյուր քառասուն միլիոն դրամ), Կողբ Հիմնադրամի կողմից (144,000,000 մեկ հարյուր քառասունչորս միլիոն դրամ) և այլ բարերարների կողմից (353 000 000 երեք հարյուր հիսուներեք միլիոն դրամ) հատկացված և հատկացվելիք նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է Տավուշի մարզի Կողբ համայնքի 1-ին փողոցի 35/1 հասցում, քաղաքաշինության ոլորտում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 737,000,000 (Յոթ հարյուր երեսունյոթ միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուն է՝ Կողբի և հարակից բնակավայրերի համայնքները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է մեկ փուլով 2016թ-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2018թ-ի սեպտեմբերի 30-[illegible] ժամանակահատվածում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի [illegible] նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>• Ճ[illegible] [illegible]գրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների [illegible]անացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում [illegible] և հաստատում – 73,000,000 (յոթանասուներեք միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը (Մինչև 2017թ-ի նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կնքվել է 71 205 000 դրամի գործարք),<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում – 634, 000,000 (վեց հարյուր երեսունչորս միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը, (Մինչև 2017թ-ի նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կնքվել է 35 884 731 դրամի գործարք),<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում – 18 000 000 (տասնութ միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը, (Մինչև 2017թ-ի նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում դեռ գործարք չի կնքվել է),<br>• Վարչական ծախսեր - 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը, (Մինչև 2017թ-ի նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարվել է 1 200 000 դրամի գործարք), |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 10,000,000 (տաս միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 63 000 000 (վաթսուներեք միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 557,200,000 (հինգ հարյուր հիսունյոթ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում արտերկրից – 76,800,000 (յոթանասունվեց միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, |

| | | |
|---|---|---|
| | | փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 6,000,000 (վեց միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 8,000,000 (ութ միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Գործուղման ծախսեր – 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Գրասենյակային և այլ ծախսեր – 1,000,000 (մեկ միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կողբի համայնքապետարանի և ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական տեսչության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1083-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-937-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21838-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-8/49596-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 23-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-937-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «80,000 դրամի չափով» բառերը փոխարինել «280,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1084-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-986-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 01.1/14-2/22087-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 06/3-8/50455-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 23-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-986-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «1,415,000 դրամի չափով» բառերը փոխարինել «1,950,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1085 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ «ՍՊԻՏԱԿԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 01.1/14-2/21754-17 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 02/14/21363-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 25-ի N 06/3-8/49416-17 եզրակացությունները* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ 27,921,593 դրամ արժողությամբ «Բարեկեցիկ մանկություն» ծրագիրը (կցվում է)։

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 06803138) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2017 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N 01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 27,921,593 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի։

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին։

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին։

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Սպիտակի թիվ 1 Մանկապատանեկան մարզադպրոց»
ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Էդիկ Բարսեղյանի կողմից

18 նոյեմբերի 2017թ.

## ՙ՚ԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ՚՚
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրական կազմակերպությունում անվճար հիմունքներով մարզվում են անապահով ընտանիքների շուրջ 100, 45 ծնողազուրկ, ինչպես նաև 17 հաշմանդամ երեխաներ: Մարզադպրոցում նրանք մարզվում են՝ ֆուտբոլ, սամբո, ձյուդո, ազատ ոճի ըմբշամարտ, շախմատ և բազկամարտ մրցաձևերով: Նրանց հետ մարզումները անց են կացնում որակյալ մարզիչներ, որոնք անում են ամեն ինչ , որպեսզի երեխաները ստանան լիարժեք դաստիրակություն և մարզվածություն:<br>Սակայն մարզումների լիարժեք գործընթացին խիստ խանգարում են շենքի անմխիթար վիճակը: Մասնավորապես անմխիթար վիճակում են մարզադահլիճի տանիքի ծածկը, դահլիճների հատակները, առաստաղը, սանհանգույցները, բացակայում է կենտրոնացված ջեռուցումը:<br>Ծրագրով նախատեսված է 2017թ-ի 2018թ-ի ընթացքում վերանորոգել «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրական կազմակերպության՝ փոխել մարզադպրոցի տանիքի ծածկը, դահլիճի հատակը ծածկը, ինչպես նաև նորոգել հանդերձարանները, սանհանգույցները և միջանցքը: |
| 2 | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործ | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է հայ-ամերիկյանՙՙԾնողազուրկ նաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ՚՚ բարեգործական հիմնադրամը (PO BOX250 38, GLENDELALE, CA9125, Tel. 8182460125 ): |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունը *(հասցե՝ ՀՀ Լոռու մարզ ք Սպիտակ, Այգեստան 6 ՀՎՀՀ 06803138)*: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ք. Սպիտակ, *Այգեստան 6* հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Փոխել մարզադպրոցի տանիքի ծածկը, դահլիճի հատակը ծածկ նորոգել հանդերձարանները, սանհանգույցները և միջանցքը: 57 5 (հիսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլլարի համարժեք դրամ (1ԱՄՆ դոլարը = 485.0) 27.921.593 (քանյ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր իննսուներեք) Հ դրամ գումար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | *Լոռու մարզի* «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպր » համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն հաճախող 6-ից 16 տարեկան մոտ անապահով ընտանիքների 162 երեխաներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2017թ-ի նոյեմբեր, մինչև 2018թ-ի հոկտեմբեր ամիսներին: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ-ի նոյեմբեր, մինչև 2018թ-ի հոկտեմբեր ամիսներին՝ փոխել մարզադպրոցի տանիքի ծածկը, դահլիճի հատակը ծածկը, նորոգել հանդերձարանները, սանհանգույցները և միջանցքը: 57 57 (հիսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլլարի համարժեք դրամ (1ԱՄՆ դոլարը = 485.0) 27.921.593 (քանյոթ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ գումար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ, որի համար արդեն կնքվել է շինարարական կապալի պայմանագիր «Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ք.Սպիտակ, Մ.Ավետիսյան 274, ՀՎՀՀ 06800406): Պայմանագրի արժեքն է 57՛570՛ (հիսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ (1ԱՄՆ դոլարը = 485.0) 27.921.593 (քանյոթ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ գումար: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Սպիտակի համայնքապետարանի կրթության բաժնի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարի կողմից,ինչպես նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1086 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 01.1/14-2/20487-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 13–ի N 03/07-1/15737-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 10–ի N ԻԱ/ԳՂ-2/10232-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 10 -ի N 06/3-8/46593-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Համբուրգ քաղաքի Մոլեկուլային նեյրոկենսաբանության կենտրոնի միջոցներով ձեռք բերված և աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (Xenopus Lavis տեսակի 18 հատ գորտ, 7.5 կգ ընդհանուր քաշով, 1,208 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 961.20 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**1 դեկտեմբեր 2017 թվականի N Մ - 1087 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N01.1/14-2/21981-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50207-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2017 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված՝ N 095/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ստեփանավան քաղաքի բարեսիրական կենտրոնի երկու մասնաշենքի տեխնիկական հետազոտության աշխատանքների կատարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2017 թվականի N Մ-1088- Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 01.1/14-2/22227-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի N 06/3-8/50987-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի N Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արփիսոլար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01825631) 2017 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N Ծ17/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ջրատաքացման համակարգի ձեռքբերման և տեղակայման աշխատանքների իրականացում՝ 15,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1089 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21948-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N ՆՁ/22.2/14794-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29–ի N 06/3-8/50206-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի՝ կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (մեկանգամյա օգտագործման ներարկիչներ և օգտագործված ներարկիչների անվտանգ պահման համար նախատեսված տուփեր, 37 տեղ, 7,398 կգ ընդհանուր քաշով, 38,006.16 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3,700 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1090 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-953-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 01.1/14-2/21955-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 29-ի N 06/3-8/50214-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակի 2017 թվականի նոյեմբերի 24-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-953-Ա որոշման 1-ին կետում «Ֆրանսիայի «Մուսկարի» ասոցիացիայի կողմից Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակի հասցեով ստացված» բառերը փոխարինել «անհատ բարերար Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Նարինե Սիմոնյանի կողմից ձեռք բերված ու «Մուսկարի» ասոցիացիայի միջոցով Հայաստանում Իտալիայի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակի հասցեով ուղարկված» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**1 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1091 -Ա**
**քաղ. Երևան**

# ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՐԿԱՐԱՐ, ԲԱԶՄԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 01.1/14-2/21975-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 02/14/21558-17, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 1/06.2/12991-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 06/3-8/50268-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյանի պողոտա 20, ՀՎՀՀ՝ 02565835) իրականացվող՝ 196,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Վայրի կենդանիների փրկարար, բազմացման և վերականգնողական կենտրոն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909273) 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N Խ-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական խողովակների ձեռքբերում՝ 8,045,930 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Անհատ ձեռներեց Նորիկ Հակոբջանյանի հետ (ՀՎՀՀ՝ 76807107) 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N Խ-03/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական խողովակների և մասերի ձեռքբերում՝ 3,874,314 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ90036001) 2017 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N 15112017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Որցաձորի վայրի կենդանիների փրկարար կենտրոնում պապվող արջերի համար կերի ձեռքբերում՝ 852,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

3. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի
հիմնադիր տնօրեն Ռուբեն Խաչատրյանի կողմից
«15» նոյեմբերի 2017թ.

## «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՐԿԱՐԱՐ, ԲԱԶՄԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Անազատ պայմաններում պահվող, լքված և/կամ հիվանդ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների փրկում, ապաստարանի տրամադրում, համապատասխան խնամքի կազմակերպում, բազմացման, ադապտացման և վերաբնակեցման իրականացում:<br>Գորշ արջերի ապաստարան- Պահպանելու գորշ արջի վայրի պոպուլյացիան, տրամադրելու համապատասխան կացարանային պայմաններ անազատության մեջ պահվող գորշ արջերին՝ տրամադրելով մասնագիտական խնամք և հնարավորության դեպքում իրականացնել նրանց վերադարձը վայրի բնություն:<br>Անգղերի բազմացման և վերաբնակեցման կենտրոն- Պահպանելու և կազմակերպելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված անգղերի բազմացումը անազատ պայմաններում և իրականացնելու նրանց վերաբնակեցումը՝ համագործակցելով միջազգային գործընկերների հետ:<br>Կովկասյան ընձառյուծի ադապտացման և վերաբնակեցման կենտրոն- Իրականացնելու Կովկասյան ընձառյուծի երիտասարդ առանձնյակների ադապտացման ընթացքը Հայաստանում և վերաբնակեցման գործընթացը տեսակին բնորոշ կենսամիջավայրում՝ նպաստելու Կովկասյան ընձառյուծի վայրի պոպուլյացիայի թվաքանակի ավելացմանը բնության մեջ:<br>Ծրագիրն ուղղված է փրկելու, համապատասխան խնամք և ապաստարան տրամադրելու, հնարավորության դեպքում վայրի բնություն վերադարձնելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված, հիվանդ, լքված կամ անազատության մեջ պահվող կենդանիներին, ինչպես նաև կազմակերպելու և իրականացնելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված անգղերի բազմացման և Կովկասյան ընձառյուծի երիտասարդ առանձնյակների ադապտացման և վերաբնակեցման գործընթացը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում են՝<br>Վայրի կենդանիների փրկարարական կենտրոն/ International Animal Rescue–75,000 եվրոին համարժեք ՀՀ դրամ՝ երեք տարվա համար<br>Բրիջիթ Բարդո հիմնադրամ/ Brigitte Bardot Foundation –15,000 եվրոյին համարժեք դրամ՝ երկու տարվա համար<br>«Բեարզ ին Մայնդ» /Bears in Mind – 7,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ երկու տարվա համար<br>«Արտիսի» Թագավորական կենդանաբանական այգի/ Artis Royal Zoo-15,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ հինգ տարվա համար<br>Անգղերի բնապահպանական հիմնադրամ/ Vulture Conservation Foundation-7,500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ երկու տարվա համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի Գերմանիայի մասնաճյուղը / E.V. Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets Germany -77,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ երեք տարվա համար |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող և իրականացնող է հանդիսանում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը<br>(գործող հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 47/1, բն. 14, ՀՎՀՀ՝ 02565835, հեռ.՝ 010 58-58-84 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում Արարատի մարզը: Ծրագրի ուղղվածությունը բնապահպանական և կրթական է՝ ուղղված պահպանելու ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանմանը, բազմացմանը, ադապտացմանը և վերաբնակեցմանը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքն է՝ 3 տարվա համար 196,500 եվրոյին համարժեք՝ 112,005,000 ՀՀ դրամ (2017թ-ին ծրագրի մեկնարկման ժամանակահատվածի փոխարժեքին համապատասխան (1եվրոն = 570ՀՀ դրամ)) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են՝<br>- Ֆիզիկական անձինք, ովքեր անազատ պայմաններում են պահում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների, օր.՝ գորշ արջերի.<br>- Վայրի բնության և մշակութաին արժեքների պահպանման հիմնադրամը.<br>-ՀՀ Բնապահպանության նախարարությունը. |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2016թ.-ից, այժմ որակավորման է ներկայացվում 2017թ.-ի նոյեմբերի 01-ից մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը իրականացվելիք ծրագիրը: |
| 9. | Միջոցառումների | 1. Գորշ արջերի ապաստարանի և Կովկասյան ընձառյուծի ադապտացման և |

| | | |
|---|---|---|
| | նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | վերաբնակեցման կենտրոնի կառուցում- 66,455,000 դրամ՝ 3 տարվա համար<br>1.1 Կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ 2017-2018թթ.<br>1.2 Կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ 2017-2018թթ.<br>1.3 Կենդանիների փախուստի և այլ վայրի կենդանիների տարածք ներխուժման անվտանգության ապահովման համար էլեկտրական ցանկապատ համակարգերի տեղադրման ծախսեր՝ 2017-2020 թթ.<br><br>**2. Անգղերի բազմացման և վերաբնակեցման կենտրոնի կառուցում - 9,280,000 դրամ՝ 3 տարվա համար**<br>2.1 Թռչունների պահման պահանջներին համապատասխան հատուկ վանդակների կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ 2017-2018թթ.<br>2.2 2.1 Թռչունների պահման պահանջներին համապատասխան հատուկ վանդակների կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ 2017-2018թթ.<br><br>**3. Կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցում- 23,510,000 դրամ՝ 3 տարվա համար**<br>3.1 Կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցման ծախսեր՝ 2017-2018թթ.<br>3.2 Կենտրոնին անհրաժեշտ սարքավորումների և պարագաների ներմուծման և ձեռքբերման ծախսեր՝ 2017-2020թթ.<br>**4. Գործ արջերի փրկարարական աշխատանքների և հետագա խնամքի կազմակերպման ծախսեր - 12,760,000 ՀՀ դրամ՝ 3 տարվա համար**<br>4.1 Սննդի ձեռքբերման և կենդանիների սննդակարգի ապահովման ծախսեր՝ 2017-2020թթ.<br>4.2 Կենդանիների խնամքն ապահովելու համար դեղերի ներմուծման և ձեռքբերման ծախսեր՝ 2017-2020թթ.<br>4.3 Կենդանիների փրկարարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 2017-2020թթ.<br>4.4 Կենդանիների խնամքի պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 2017-2020թթ. |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ծախսվում է. <br>*Շուրջ 66,455,000 դրամ՝* վայրի կենդանիների պահպանման տարածքի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր 34,833,000 դրամ և կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր 23,222,000 դրամ, էլեկտրական ցանկապատ համակարգերի տեղադրման ծախսեր 8,400,000 դրամ:<br>*Շուրջ 9,280,000 դրամ՝* թռչունների պահման հատուկ վանդակների կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսեր՝ 5,150,000 դրամ և կառուցապատման աշխատանքներին ուղղված ծախսեր՝ 4,130,000 դրամ:<br>*Շուրջ 23,510,000 դրամ՝* կենդանաբուժական և լաբորատոր կենտրոնի կառուցման ծախսեր՝ 17,825,000 դրամ, անհրաժեշտ սարք-սարքավորումների և պարագաների ձեռքբերման՝ 2,235,000 դրամ և 3,450,000 ներմուծման ծախսեր:<br>*Շուրջ 12,760,000 դրամ՝* սննդի ձեռքբերման և կենդանիների սննդակարգի ապահովման ծախսեր՝ 5,700,000 դրամ, կենդանիների խնամքն ապահովելու համար դեղերի ձեռքբերման 830,000 դրամ և ներմուծման համար 1,860,000 դրամ ծախսեր, կենդանիների փրկարարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 2,150,000 դրամ, կենդանիների խնամքի պարագաների ձեռքբերման 850,000 դրամ և ներմուծման 1,370,000 դրամ ծախսեր |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր ծրագրով նախատեսված չեն և իրականացվելու են Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի սեփական միջոցներով: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Բնապահպանության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետարաններ, այլ առնտրային կազմակերպություններ և իրավաբանական անձինք |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն կներկայացվի դոնորներին, ինչպես նաև սահմանված կարգով ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1092 -Ա**

**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/14-2/22366-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 06/3-8/50988-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից ձեռք բերված վերելակը իր բաղադրիչներով (1,810 կգ ընդհանուր քաշով, 19,500 եվրո արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1093 - Ա**
**քաղ. Երևան**

### «ԼՈՒՅՍ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԱՐՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽԱՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Մայք Սարիանի կողմից «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի հասցեով ստացված բեռների (38,781 կգ ընդհանուր քաշով, 10,210,325 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 5,600 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամին՝ նշված բեռների ձևակերպումն և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հ[illegible] պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապե[illegible]ընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ապրանքների անվանացանկ

| h/h | Անվանում | Քանակ | Արտադրող | Անվանումը անգլերենով | Միավորի գին (մոտավոր) ԱՄՆ$ | Արժեք (մոտավոր) ԱՄՆ$ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1" ժապավեն | 5 | - | Roll of 1" Tape | 339.62 | 1,698.11 |
| 2 | 2x3 վիրակապի ամրակ | 10 | - | 2"X3" Bdge Strips | 169.81 | 1,698.11 |
| 3 | Gauze վիրակապ | 4 | - | 6"X5 yds Bdge. Gauze | 424.53 | 1,698.11 |
| 4 | hush slush սարքավորում | 1 | - | hush slush machine | 4,043.48 | 4,043.48 |
| 5 | pft սարքավորում | 1 | viasis healthcare | pft machine | 4,043.48 | 4,043.48 |
| 6 | tbs համակարգ | 1 | stryker | tbs console | 4,043.48 | 4,043.48 |
| 7 | ultracision harmonic սկալպել | 1 | ethicon endo-surgery | ultracision harmonic scalpel | 14,000.00 | 14,000.00 |
| 8 | աթերեքկոմիայի համակարգ | 4 | sci | atherectomy system | 1,010.87 | 4,043.48 |
| 9 | ալկոհոլային անձեռոցիկ | 15 | - | Alcohol Wipes | 113.21 | 1,698.11 |
| 10 | ամիակի ինհալանտ | 2 | - | Ammonia Inhalants | 849.06 | 1,698.11 |
| 11 | այրվածքի գել | 2 | - | Burn Aid | 849.06 | 1,698.11 |
| 12 | այրվածքի սպրեյ | 1 | - | Burn Spray | 1,698.11 | 1,698.11 |
| 13 | անզգայացման սարք | 3 | daytex ohmeda | anesthesia machine | 36,000.00 | 108,000.00 |
| 14 | անզգայացման սարք | 6 | drager | anesthesia machine | 129,000.00 | 774,000.00 |
| 15 | անզգայացման սարք | 2 | ohmeda | anesthesia machine | 36,000.00 | 72,000.00 |
| 16 | անզգայացման սարք | 1 | datascope | anesthesia machine | 36,000.00 | 36,000.00 |
| 17 | անզգայացման սարք | 1 | drager | anesthesia machine | 129,000.00 | 129,000.00 |
| 18 | անկողին | 2 | stryker | bed | 2,021.74 | 4,043.48 |
| 19 | անկողին | 6 | hill-rom | bed | 673.91 | 4,043.48 |
| 20 | անկողին | 1 | sechrist | bed | 4,043.48 | 4,043.48 |
| 21 | անկողին | 1 | biodex medical | bed | 4,043.48 | 4,043.48 |
| 22 | անկողին | 1 | - | bed | 4,043.48 | 4,043.48 |
| 23 | անկողին | 1 | pedicraft | bed | 4,043.48 | 4,043.48 |
| 24 | անձեռոցիկ խայթոցից հետո | 6 | - | After Bite Wipes | 283.02 | 1,698.11 |
| 25 | անվտագության նշումներ | 6 | - | Safety Pins | 283.02 | 1,698.11 |
| 26 | աշխատանքային կայան | 1 | oec medical | workstation | 4,043.48 | 4,043.48 |
| 27 | աչքի բինտ | 2 | - | Eye Pads | 849.06 | 1,698.11 |
| 28 | աչքի բինտ | 2 | - | Eye Pads | 849.06 | 1,698.11 |
| 29 | առաջին օգնության կրեմ | 4 | - | First Aid Cream | 424.53 | 1,698.11 |
| 30 | արթոսկոպիկ պոմպ | 2 | stryker | arthorscopy pump | 7,400.00 | 14,800.00 |
| 31 | արհեստական շնչառության դիմակ | 1 | - | CPR Mask | 1,698.11 | 1,698.11 |
| 32 | արյան գազերի անալիզատոր | 2 | roche | blood gas analyzer | 55,000.00 | 110,000.00 |
| 33 | արնահոսությունը դադարեցնող վիրակապ | 2 | - | Bleed Stop Bdge. | 849.06 | 1,698.11 |
| 34 | բազմակի գունային սկաների մոնիտոր | 1 | philips healthcare | multi scan color monitor | 4,043.48 | 4,043.48 |
| 35 | բազմակի վերքերի վիրակապ | 4 | - | Multi-Trauma Dressing 12"X30" | 424.53 | 1,698.11 |
| 36 | բամբակյա փայտիկների արկղ | 1 | - | Box of 100 Cotton Tips | 1,698.11 | 1,698.11 |
| 37 | բենզինի լուծույթ | 1 | - | Petroleum Jelly | 1,698.11 | 1,698.11 |
| 38 | գրչի լույս | 1 | - | Pen Light | 1,698.11 | 1,698.11 |
| 39 | դեֆիբրիլյատոր | 5 | medtronic | defibrillator | 18,000.00 | 90,000.00 |
| 40 | դեֆիբրիլյատորի մոնիտոր | 3 | medtronic | defibrillatory monitor | 18,000.00 | 54,000.00 |
| 41 | դեֆիբրիլյատորի մոնիտոր | 9 | medtronic | defibrillatory monitor | 18,000.00 | 162,000.00 |
| 42 | դոպլեր | 1 | unitex | doppler | 4,043.48 | 4,043.48 |
| 43 | եռակի հակաբիոտիկ | 1 | - | Triple Antibiotic | 1,698.11 | 1,698.11 |
| 44 | եռանկյունաձեւ նշագիծ | 2 | - | Triangular Badge | 849.06 | 1,698.11 |
| 45 | եռանկյունաձեւ նշագիծ | 2 | - | Triangular Badge | 849.06 | 1,698.11 |
| 46 | էլաստիկ վիրակապ 2" | 1 | - | 2" Elastic Bdge. | 1,698.11 | 1,698.11 |
| 47 | էլաստիկ վիրակապ 6" | 2 | - | 6" Elastic Bdge. | 849.06 | 1,698.11 |
| 48 | էմուլսիֆայեր phaco | 2 | alcon | phaco-emulsifier | 92,000.00 | 184,000.00 |
| 49 | էմուլսիֆայեր phaco | 1 | alcon | phaco-emulsifier | 92,000.00 | 92,000.00 |
| 50 | էջագիր | 1 | hewlett packard | page writer | 4,043.48 | 4,043.48 |
| 51 | թթվածնային սենյակ | 1 | sechrist | hyperbaric chamber | 4,043.48 | 4,043.48 |
| 52 | թոքային վենտիլյատոր | 6 | newport medial | ventilator | 28,000.00 | 168,000.00 |
| 53 | թոքային վենտիլյատոր | 1 | siemens | ventilator | 28,000.00 | 28,000.00 |
| 54 | թոքային վենտիլյատոր | 1 | ipv | ventilator | 28,000.00 | 28,000.00 |

| Բաշխման ցանկ սահմանամերձ համայնքների համար | | |
|---|---|---|
| ԱՆՎԱՆՈՒՄ | Քանակ | |
| Sam/ Universal Splint | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Multi-Trauma Dressing l2"X30" | 4 | Սահմանամերձ համայնքներ |
| 6"X5 yds Bdge.Gauze | 4 | Սահմանամերձ համայնքներ |
| 6" Elastic Bdge.10 2" Elastic Bdge. | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| 4"X4" Sterile Pads10 2"X2" Sterile Pads | 4 | Սահմանամերձ համայնքներ |
| 5MX9" Abdominal Pads | 10 | Սահմանամերձ համայնքներ |
| Bleed Stop Bdge. | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Eye Pads | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Triangular Badge 1003"X1" Bdge Strips | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Butterfly Strip | 5 | Սահմանամերձ համայնքներ |
| 2"X3" Bdge Strips10 Knuckle Bdge. | 10 | Սահմանամերձ համայնքներ |
| Instant Ice Packs | 3 | Սահմանամերձ համայնքներ |
| Stethoscope | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Lip Treatment | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| EMT Shears | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Hemostats | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Tweezers | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Skin Probe | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Scalpel Handle #3 | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Scalpel Blades | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Pen Light | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Suture Sets | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Hand Soap | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| 6oz Calamine Lotion | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Petroleum Jelly | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Burn Spray | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Eye Pads | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| 2oz HAND SANITIZER | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Triangular Badge | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| First Aid Cream6 Safety Pins | 4 | Սահմանամերձ համայնքներ |
| Pill Bottles | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Pair of LatexGloves | 6 | Սահմանամերձ համայնքներ |
| Pain Reliever | 14 | Սահմանամերձ համայնքներ |
| Tourniquet | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Triple Antibiotic | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Burn Aid | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Roll of 1"Tape | 5 | Սահմանամերձ համայնքներ |
| Alcohol Wipes | 15 | Սահմանամերձ համայնքներ |
| Iodine PVP Wipes | 15 | Սահմանամերձ համայնքներ |
| Antiseptic BZK Wipes | 15 | Սահմանամերձ համայնքներ |
| Clean Wipes | 15 | Սահմանամերձ համայնքներ |
| After Bite Wipes | 6 | Սահմանամերձ համայնքներ |
| Ammonia Inhalants | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| CPR Mask | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Airways | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Tongue Depressors | 2 | Սահմանամերձ համայնքներ |
| Skin and EyeWash | 1 | Սահմանամերձ համայնքներ |
| Box of 100Cotton Tips | 1 | Սահմանամերձ համայնքներ |

| ԱՆՎԱՆՈՒՄ | ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՋԱՐԿ | ՊՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ | |
|---|---|---|---|---|
| HYPERBARIC CHAMBER | SECHRIST | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ULTRASOUND | SIEMENS | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական, Երևանի և Լոռու կայազորային հոսպիտալներ |
| VENTILATOR | NEWPORT MEDICAL | 6 | 6 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| AIR COMPRESSOR | NEWPORT MEDICAL | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VENTILATOR SYSTEM | SIEMENS | 5 | 5 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BED | STRYKER | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BED | HILL-ROM | 6 | 6 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VENTILATOR | SIEMENS | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | BCI | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | WELCH ALLYN | 5 | 5 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | GE HEALTHCARE | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VENTILATOR | IPV | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| IRRIGATION PUMP | BIOSENSE WEBSTER | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | MDE | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ANESTHESIA MACHINE | DAYTEX OHMEDA | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| HYPOTHERMIA MACHINE | GAYMAR | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ULTRASOUND | GE | 1 | 1 | Զանգեզուրի կայազորային հոսպիտալ |
| INFANT WARMING SYSTEM | OHMEDA | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BLOOD GAS ANALYZER | ROCHE | 2 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| DEFIBRILLATORY MONITOR | MEDTRONIC | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| PHACO-EMULSIFIER | ALCON | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ANETHESIA MACHINE | DRAGER | 6 | 6 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ANETHESIA MACHINE | OHMEDA | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ANETHESIA MACHINE | DRAGER | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ATHERECTOMY SYSTEM | CSI | 4 | 4 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| DOPPLER | UNITEX | 1 | 1 | Երևանի կայազորային հոսպիտալ |
| PFT MACHINE | VIASYS HEALTHCARE | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| ULTRASOUND SYSTEM | PHILIPS HEALTHCARE | 1 | 1 | Երևանի կայազորային հոսպիտալ |
| BED | SECHRIST | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BED | BIODEX MEDICAL | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| VENTILATOR | NEWPORT MEDICAL | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| SURGICAL MICROSCOPE | CARL ZEISS | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| LIGHT SOURCE | CARL ZEISS | 2 | 2 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| PATIENT LIFT | HOYER | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| PATIENT LIFT | ARJO | 3 | 3 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BED | | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |
| BED | PEDICRAFT | 1 | 1 | Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ |

| ԱՆՎԱՆՈՒՄ | ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՋԱՐԿ | ՊՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ | |
|---|---|---|---|---|
| PULSE OXIMETER | NONIN | 3 | 3 | Բոլոր հոսպիտալներին |
| PORTABLE X-RAY | GE HEALTHCARE | 18 | 14 | Բոլոր հոսպիտալներին |
| USED HOSPIRA LEFECARE 5000 PUMP | | 247 | 247 | Բոլոր հոսպիտալներին |
| ULTRASOUND | GE HEALTHCARE | 3 | 3 | Բոլոր հոսպիտալներին |
| C-ARM | OEC | 3 | 3 | Բոլոր հոսպիտալներին |
| CAREFUSION ALARIS IVAC 7100 SIGNATURE IV INFUSION | | 58 | 58 | Բոլոր հոսպիտալներին |
| PATIENT MONITOR | PHILIPS | 57 | 57 | Բոլոր հոսպիտալներին |
| INFANT INCUBATOR | OHIO | 3 | 3 | Վերակազմակերպվող ԲԿ-ներ |
| INFANT INCUBATOR . | AIR SHIELDS | 2 | 2 | Վերակազմակերպվող ԲԿ-ներ |
| DEFRIBRILLATORY MONITOR | MEDTRONIC | 9 | 9 | Բոլոր հոսպիտալներին |
| DEFRIBRILLATOR | MEDTRONIC | 5 | 5 | Բոլոր հոսպիտալներին |
| URINE ANALYZER | ROCHE | 10 | 8 | Բոլոր հոսպիտալներին |

| ԱՆՎԱՆՈՒՄ | ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՋԱՐԿ | ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | |
|---|---|---|---|---|
| PORTABLE X-RAY | GE HEALTHCARE | 18 | 1 | |
| ARTHROSCOPY PUMP | STRYKER | 2 | 1 | |
| ULTRACISION HARMONIC SCALPEL | ETHICON ENDO-SURGERY | 1 | 1 | |
| URINE ANALYZER | ROCHE | 10 | 1 | |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | DATASCOPE | 4 | 4 | տնօրեն Գարունիկ Ղուշյան |
| ULTRASOUND UNIT | SONOSITE | 1 | 1 | |
| PATIENT MONITOR | DATASCOPE | 4 | 4 | |
| HEAT LAMP | EMERSON | 1 | 1 | |
| THERMAL IMAGER | AGFA | 2 | 1 | |
| BLOOD GAS ANALYZER | ROCHE | 2 | 1 | |
| WORKSTATION | OEC MEDICAL | 1 | 1 | |

| ԱՆՎԱՆՈՒՄ | ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՋԱՐԿ | ՊՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ | ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | ՄՆԱՑՈՐԴ |
|---|---|---|---|---|---|
| HYPERBARIC CHAMBER | SECHRIST | 1 | 1 | | 0 |
| ULTRASOUND | SIEMENS | 3 | 3 | | 0 |
| PULSE OXIMETER | NONIN | 3 | 3 | | 0 |
| PORTABLE X-RAY | GE HEALTHCARE | 18 | 14 | 1 | 3 |
| USED HOSPIRA LEFECARE 5000 PUMP | | 247 | 247 | | 0 |
| IV INFUSION FO | | | | | 0 |
| ARTHROSCOPY PUMP | STRYKER | 2 | | 1 | 1 |
| TPS CONSOLE | STRYKER | 1 | | | 1 |
| ABBOTT PLUM XL MICRO MACRO IV | | 14 | | | 14 |
| PUMP PATIENT READY WITH 90 DAY | | | | | 0 |
| WARRANTY | | | | | 0 |
| VENTILATOR | NEWPORT MEDICAL | 6 | 6 | | 0 |
| AIR COMPRESSOR | NEWPORT MEDICAL | 2 | 2 | | 0 |
| VENTILATOR SYSTEM | SIEMENS | 5 | 5 | | 0 |
| BED | STRYKER | 2 | 2 | | 0 |
| BED | HILL-ROM | 6 | 6 | | 0 |
| VENTILATOR | SIEMENS | 1 | 1 | | 0 |
| ULTRASOUND | GE HEALTHCARE | 3 | 3 | | 0 |
| ULTRASOUND | MEDISON | 1 | | | 1 |
| ULTRASOUND | MEIDCAL | 1 | | | 1 |
| C-ARM | OEC | 3 | 3 | | 0 |
| ULTRACISION HARMONIC SCALPEL | ETHICON ENDO-SURGERY | 1 | | 1 | 0 |
| URINE ANALYZER | ROCHE | 10 | 8 | 1 | 1 |
| FETAL MONITOR | COROMETRICS | 3 | | | 3 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | BCI | 2 | 2 | | 0 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | WELCH ALLYN | 5 | 5 | | 0 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | GE HEALTHCARE | 1 | 1 | | 0 |
| RADIOISOTOPE CALIBRATOR | CAPINTEC | 1 | | | 1 |
| HYDROTHERAPY EQUIPMENT | WHITEHALL | 3 | | | 3 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | PRESSMATE ADVANTAGE | 1 | | | 1 |
| PHOTOTHERAPY UNIT | OLYMPIC MEDICAL | 3 | | | 3 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | ALARIS | 1 | | | 1 |
| VENTILATOR | IPV | 1 | 1 | | 0 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | DATASCOPE | 4 | | 4 | 0 |
| ULTRASOUND UNIT | SONOSITE | 1 | | 1 | 0 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | MINDRAY | 1 | | | 1 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | DINAMAP | 1 | | | 1 |
| PATIENT MONITOR | INVIVO RESEARCH | 1 | | | 1 |
| LITE BOX | WELCH ALLYN | 1 | | | 1 |
| IRRIGATION PUMP | BIOSENSE WEBSTER | 1 | 1 | | 0 |
| PATIENT MONITOR | DATASCOPE | 4 | | 4 | 0 |
| CAREFUSION ALARIS IVAC 7100 SIGNATURE IV INFUSION | | 58 | 58 | | 0 |
| PATIENT MONITOR | HEWLETT PACKARD | 3 | | | 3 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | DINAMAP | 1 | | | 1 |
| AIR OXYGEN MIXER | SECHRIST | 1 | | | 1 |
| SPOTLIGHT | STRYKER | 1 | | | 1 |
| HEAT LAMP | EMERSON | 1 | | 1 | 0 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | MDE | 1 | 1 | | 0 |
| PATIENT MONITOR | PHILIPS | 57 | 57 | | 0 |
| ANESTHESIA MACHINE | DAYTEX OHMEDA | 3 | 3 | | 0 |
| THERMAL IMAGER | AGFA | 2 | | 1 | 1 |
| VITAL SIGN MONITORING SYSTEM | INVIVO RESEARCH | 1 | | | 1 |
| PHYSIOLOGICAL MONITOR | INVIVO RESEARCH | 1 | | | 1 |
| HYPOTHERMIA MACHINE | GAYMAR | 3 | 3 | | 0 |
| ULTRASOUND | GE | 1 | 1 | | 0 |
| INFANT WARMING SYSTEM | OHMEDA | 3 | 3 | | 0 |
| HUSH SLUSH MACHINE | | 1 | | | 1 |
| INFANT INCUBATOR | OHIO | 3 | 3 | | 0 |
| INFANT INCUBATOR . | AIR SHIELDS | 2 | 2 | | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| BLOOD GAS ANALYZER | ROCHE | 2 | 1 | 1 | 0 |
| ULTRASOUND SYSTEM | GE HEALTHCARE | 1 | | | 1 |
| IMMUNOASSAY ANALYZER | BECKMAN COULTER | 1 | | | 1 |
| FETAL MONITOR | GE | 3 | | | 3 |
| DEFIBRILLATORY MONITOR | MEDTRONIC | 3 | 3 | | 0 |
| PHACO-EMULSIFIER | ALCON | 1 | 1 | | 0 |
| ANETHESIA MACHINE | DRAGER | 6 | 6 | | 0 |
| ANETHESIA MACHINE | OHMEDA | 2 | 2 | | 0 |
| ANETHESIA MACHINE | DATASCOPE | 1 | | | 1 |
| MONITOR | HEWLETT PACKARD | 2 | | | 2 |
| MODULE RACK | HEWLETT PACKARD | 2 | | | 2 |
| MODULE | HEWLETT PACKARD | 11 | | | 11 |
| ANETHESIA MACHINE | DRAGER | 1 | 1 | | 0 |
| MODULE | AGILENT | 1 | | | 1 |
| INFANT INCUBATOR | INTERNATIONAL BIOMEDICAL | 1 | | | 1 |
| C-ARM | OEC MEDICAL | 1 | | | 1 |
| WORKSTATION | OEC MEDICAL | 1 | | 1 | 0 |
| SIGNATURE GOLD 7230 INFUSION RUMP REFUSB SHED | | 138 | | | 138 |
| LIGHTSOURCE | OLYMPIC MEDICAL | 3 | | | 3 |
| ATHERECTOMY SYSTEM | CSI | 4 | 4 | | 0 |
| PAGE WRITER | HEWLETT PACKARD | 1 | | | 1 |
| PHACO-EMULSIFIER | ALCON | 1 | | | 1 |
| DOPPLER | UNITEX | 1 | 1 | | 0 |
| PFT MACHINE | VIASYS HEALTHCARE | 1 | 1 | | 0 |
| ULTRASOUND | ACUSON | 1 | | | 1 |
| ULTRASOUND SYSTEM | PHILIPS HEALTHCARE | 1 | 1 | | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| MULTI SCAN COLOR MONITOR | PHILIPS HEALTHCARE | 1 | | | 1 |
| ULTRASOUND | PHILIPS HEALTHCARE | 1 | | | 1 |
| BED | SECHRIST | 1 | 1 | | 0 |
| BED | BIODEX MEDICAL | 1 | 1 | | 0 |
| VENTILATOR | NEWPORT MEDICAL | 2 | 2 | | 0 |
| SURGICAL MICROSCOPE | CARL ZEISS | 1 | 1 | | 0 |
| LIGHT SOURCE | CARL ZEISS | 2 | 2 | | 0 |
| PATIENT LIFT | HOYER | 1 | 1 | | 0 |
| PATIENT LIFT | ARJO | 3 | 3 | | 0 |
| BED | | 1 | 1 | | 0 |
| BED | PEDICRAFT | 1 | 1 | | 0 |
| PALLET I-300lbs | PALLET 2-450lbs | 1 | | | 0 |
| DEFRIBRILLATORY MONITOR | MEDTRONIC | 9 | 9 | | 1 |
| DEFRIBRILLATOR | MEDTRONIC | 5 | 5 | | 0 |
| | | | | | 0 |

Կ. Պապիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 դեկտեմբերի 2017 թվականի N Մ - 1094 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ին)
**քաղ. Երևան**

## «ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 01.1/14-2/-21010-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N ՆՁ/22.2/14326/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 06/3-8/48400-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Մայկ Մ.Մուրադյանի (անձնագիր N 506579232) կողմից, արդիական մարդու գենոմիկայի հետազոտությունների համար, «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ-ի հասցեով ստացված բեռի (ABI 3130 գենետիկ անալիզատոր 4 կապիլարներով և համակարգիչ Dell 755 PC 24 համապատասխան ծրագրով մոնիտոր, 200 կգ ընդհանուր քաշով, 44,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 դեկտեմբերի 2017 թվականի N Մ- 1095 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայի «BirthLink» բարեգործական կազմակերպության կողմից «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (բժշկական սարքավորումներ՝ 4 հատ նորածնային տաքացուցիչ և 2 հատ արհեստական շնչառության սարք, 16 տեղ, 485 կգ ընդհանուր քաշով, 28,820 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,887.34 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական. առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**